Գրքի միջազգային ստանդարտ համարակալման համակարգ

ISBN
գործածողի ձեռնարկ

Թարգմանված է անգլերեն 5-րդ՝ վերամշակված հրատարակությունից
«ISBN միջազային գործակալություն»
Բեռլին, 2005թ.

Ուժի մեջ է 2007թ. հունվարի 1-ից

Երևան
Հայաստանի ազգային գրապալատ
2007

ՀՊՏ 655.4/.5
ԳՄԴ 76.17

Թարգմ.՝ Ռ. Բաղրամյան, Տ. Բաղրամյան

Խմբ.՝ Ք. Մաթևոսյան
Գլխ. խմբ.՝ Հ. Բեքմեզյան

ISBN գործածողի ձեռնարկ. - Եր.: Հայաստանի ազգային գրապալատի հրատ., 2007. - 84 էջ:

ԳՄԴ 76.17

ISBN 3-88053-118-8
© ISBN միջազգային գործակալություն, 2005 թ.

ISBN 978-99930-50-15-5
© Հայաստանի ազգային գրապալատ, 2007թ.

Բովանդակություն

Հինգերորդ հրատարակության նախաբան 5
1. ISBN-ի ստեղծման պատմությունը 7
2. ISBN-ի առավելությունները 9
3. ISBN-ի գործառույթները և գործունեության շրջանակը 10
4. ISBN-ի կառուցվածքը 13
4.1. Նախածանցային տարր 14
4.2. Գրանցախմբի տարր 14
4.3. Գրանցվողի տարր 14
4.4. Հրատարակության տարր 15
4.5. Ստուգիչ թիվ 15
4.6. Համարախմբերի բաշխումը 17
5. ISBN-ի կիրառումը 26
5.1. Ընդհանուր դրույթներ 26
5.2. Փոփոխություններ հրատարակության մեջ 26
5.3. Ճշգրիտ (ֆաքսիմիլային) վերատպություններ 26
5.4. Գրքի տպագրական տարբեր ձևերը 27
5.5. Առանց կազմի հրատարակություններ 27
5.6. Բազմահատոր հրատարակություններ 27
5.7. Տպագրված գրքերի ցանկ 28
5.8. Համատեղ հրատարակություններ 28
5.9. Գործակալների միջոցով վաճառվող կամ տարածվող հրատարակություններ 28
5.10. Հրատարակչության ձեռք բերումը մեկ այլ հրատարակչի կողմից 29
5.11. Գրքի ամբողջական պաշարների և իրավունքների ձեռք բերումը 29
5.12. Մեկից ավելի վայրերում հրատարակչություններ ունեցող հրատարակիչներ 29
5.13. ISBN-ների գրանցումը և տվյալների հավաքագրումը 30
5.14. ISBN-ները երբեք չեն կարող կիրառվել երկրորդ անգամ 31
6. ISBN-ը էլեկտրոնային հրատարակությունների և ուսուցողական / հրահանգչական ծրագրերի համար 32
6.1. ISBN-ը համապատասխան էլեկտրոնային հրատարկությունների համար 32
6.2. ISBN-ը համապատասխան համակարգչային արտադրանքների համար 33

6.3. Էլեկտրոնային հրատարակություններին և ծրագրերին ISBN նշանակելու սկզբունքները 33
7. ISBN պատվիրված հրատարկությունների համար 35
8. ISBN-ի տեղը և արտաքին ձևը հրատարակությունների վրա 36
8.1. Ընդհանուր դրույթներ 36
8.2. ISBN-ը գծիկավոր ծածկագրի տեսքով 37
8.3. Հավելյալ հնգանիշ ծածկագիր 38
8.4. EAN.UCC գծիկավոր ծածկագրի տրամադրումը ISBN-ի փոխարեն. հրահանգներ ծածկագրի պատկերը հատկացնողներին 39
8.5. ISBN-ի և EAN.UCC-ի գծիկավոր ծածկագրի ստեղծման ալգորիթմը 40
9. ISBN համակարգի կառավարումը 41
9.1. Ընդհանուր դրույթներ 41
9.2. Միջազգային կառավարում 41
9.3. ISBN գրանցող գործակալություններ 42
9.4. Հրատարակչի պարտականությունները 43
10. Համակարգում չընդգրկված հրատարակչություններ 45
11. ISBN-ի գործնական կիրառումը 46
12. ISBN և EAN 48
13. ISBN և այլ նույնականացուցիչներ 49
13.1. DOI 49
13.2. GTIN 50
13.3. Ինտերնետային նույնականացուցիչներ. URN 51
13.4. ISAN և V-ISAN 52
13.5. ISMN 54
13.6. ISRC 55
13.7. ISSN 56
13.8. ISTC 57
13.9. ISWC 58
14. ONIX 60
15. Հրատարակություններ 61
ISBN համակարգի վերաբերյալ առավել հաճախակի տրվող հարցեր 62
Քաղվածքներ տասներեքանիշ ISBN-ների կիրառման ուղեցույցից 72
Միջազգային համակարգերի զարգացման ուղեցույց 83

Հինգերորդ հրատարակության նախաբան

Գրքի միջազգային ստանդարտ համարակալման համակարգը նշանակալի հաջողություն է ունեցել սկսած 1968 թվականից, երբ այն ընդունվեց որպես «գրքի ստանդարտ համար» Մեծ Բրիտանիայում: Մեկ տարվա ընթացքում գրքի ստանդարտ համարը վերափոխվեց գրքի միջազգային ստանդարտ համարի և իննանիշ համարից դարձավ տասանիշ: Երբ 1970 թվականին այն վավերացվեց ISO-ի կողմից՝ որպես միջազգային ստանդարտ 2108, այդ համակարգի միջազգային կանոնակարգման պատասխանատվությունը կրեց Բեռլինի ISBN միջազգային գործակալությունը, որն ընդգրկված է Բեռլինի ազգային գրադարանի մեջ: Ներկայումս 166 երկրներ հանդիսանում են ISBN համակարգի անդամներ:

ISBN-ի հաջողությունը էլեկտրոնային հրատարակությունների զարգացման և տարածման հետ միասին տեղիք տվեցին մտահոգվելու ներկայիս ISBN-ի տասանիշ համակարգի ընդգրկունակության վերբերյալ: Որոշվեց վերանայել ստանդարտը՝ կիրառելով EAN/Bookland-ի տարբերակը որպես նոր տասներեքանիշ նույնականացուցիչ, որն էլ կապահովեր մեծածավալ խմբաքանակ գալիք տարիների համար: Քննարկվեցին նաև մի շարք այլ տարբերակներ, սակայն սա համարվեց ամենահարմար լուծումը, քանի որ շուկան արդեն իսկ ծանոթ էր այդ տեսակի հետ՝ ISBN գծիկավոր ծածկագրի ձևով: Ավելին, EAN.UCC, որը գծիկավոր ծածկագրման միջազգային կարգավորողն է, իր պատրաստակամությունը հայտնեց հավելյալ տասներեքանիշ EAN նախածանցներ տրամադրելու՝ երաշխավորելով համակարգի հետագա ծավալման հնարավորությունը:

Վերանայման ընթացքում, հնարավորություն ընձեռնվեց ուսումնասիրել և վերասահմանել ISBN-ի միջոցով նույնականացվող նյութերի շրջանակը: Նոր ստանդարտը ներառում է հրատարակությունների գլուխներ, նույնիսկ հոդվածներ (երբ հնարավոր է առանձին կիրառել), թույլատրելի սահմաններում: Տվյալ ձեռնարկում ընդգրկված է առավել հաճախակի տրվող հարցերի բաժին, որը կօգնի կիրառողներին ճիշտ օգտվել համարակալման համակարգից, ինչպես նաև զետեղված է ուղեցույց՝ տասներեքանիշ ISBN-ի կիրառման գործընթացի վերաբերյալ: ONIX-ից օգտվողներին աջակցելու նպատակով կազմված է առանձին բաժին, որը նկարագրում է ISBN-ի համար նախատեսված տվյալների բնույթը:

Ապագայում առավել ամուր հիմքեր ստեղծելու համար՝ ISBN-ը դառնում է անդամակցության վրա հիմնված կազմակերպություն, որը գոյատևում է ի շնորհիվ անդամակցած տեղական գործակալությունների կողմից կատարվող ներդրումների: Կառավարման կառուցվածքին վերաբերող մյուս բոլոր մանրամասները ներկայացված են առանձին փաստաթղթերում:

ISBN գործածողի ձեռնարկը ISO-ի կողմից հաստատված ստանդարտի տեքստի պաշտոնական մեկնաբանությունն է: Այն վերածում է վերջինիս հիմնական դրույթները կոնկրետ ուղեցույցի և տրամադրում պատկերավոր օրինակներ: Ձեռնարկը հրատարակվել է ISO-ի կողմից նոր ստանդարտի թողարկման հետ միաժամանակ՝ աջակցելու գործակալություններին և հրատարկիչներին անցումային շրջանում մինչև 2007 թվականի հունվարի 1-ը, ինչպես նաև նոր նշանակման սկզբունքներով և ծավալով ISBN-ի նոր համակարգ հիմնելու նպատակով: Մասնավորապես, այժմ գործածողներին ավելի մանրամասն տեղեկատվություն կմատուցվի թույլատրվող արտադրանքների, էլեկտրոնային հրատարկությունների և այլնի վերաբերյալ, քանի որ դրանք չունեն ժամանակային սահմանափակում:

Ներկայիս ձեռնարկը կազմվել է մի շարք ISBN գործակալությունների կողմից և ներառում է ISO 2108 վերանայող աշխատանքային խմբի միջազգային ներկայացուցիչների մեծ ներդրումը Ստելա Գրիֆիտի վերահսկողության ներքո (Միացյալ Թագավորության ISBN գործակալություն): Աշխատանքն իրականացնողներն արժանացել են ամբողջ ISBN համայնքի խորհին երախտագիտությանը:

Կարիք չկա նշելու, որ ISBN-ի կիրառումը դինամիկ է, և բնականաբար այս ձեռնարկն ապագայում անպայման կենթարկվի փոփոխությունների: Այնուամենայնիվ, այն պետք է համարվի մոտակա 10 տարիների համար հուսալի ուղեցույց:

Հունվար 2005, Բեռլին
Հարթմութ Վալրավենս

1. ISBN-ի ստեղծման պատմությունը

Գրքերի համարակալման միջազգային համակարգի ստեղծման և պիտանիության հարցը առաջին անգամ բարձրացվել է 1966 թվականի նոյեմբերին՝ Բեռլինում կայացած գրքի շուկայի հետազոտությունների և գրքի առևտրի բարելավմանը նվիրված երրորդ միջազգային կոնֆերանսում:

Այդ ժամանակ Եվրոպայում մի շարք հրատարակիչներ և գրքի մատակարարներ դիտարկում էին պատվերների մշակման և գույքագրման գործընթացների համակարգչացման հնարավորությունը: Եվ պարզվեց, որ նման ավտոմատ համակարգի ստեղծման նախապայմանը կարող էր հանդիսանալ հրապարակվող նյութերի եզակի և պարզ թվային նույնականացման միջոցի ներմուծումը:

Համակարգը, որը բավարարեց այդ պահանջները և հայտնի դարձավ որպես «գրքի միջազգային ստանդարտ համար» (ISBN), ձևավորվեց 1967 թվականին Մեծ Բրիտանիայում՝ J. Whitaker & Sons, LTD. և 1968 թվականին ԱՄՆ-ում՝ RR. Bowker, հայտնի ընկերությունների կողմից ներդրված գրքերի համարակալման համակարգի հիմքի վրա:

Այդ նույն ժամանակ Ստանդարտացման Միջազգային Կազմակերպության (ISO) Տեղեկատվության և Փաստաթղթավարության 46-րդ - Տեխնիկական կոմիտեն (TC 46) ստեղծեց բրիտանական համակարգը միջազգային մասշտաբներով օգտագործելու հարմարեցման հնարավորությունն ուսումնասիրող աշխատանքային մի խումբ:

1968-1969 թվականների ընթացքում մի քանի հանդիպումներ տեղի ունեցան եվրոպական տարբեր երկրների և ԱՄՆ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ, որոնց հաշվետվություններն ուղարկվեցին ISO-ին անդամագրված բոլոր երկրներին:

Այդ հանդիպումների արդյունքը եղավ այն, որ գրքի միջազգային ստանդարտ համարը 1970 թվականին ընդունվեց որպես ISO 2108[1] ստան-

---

1

դարտ, որը հետագայում՝ 1978 և 1992 թվականներին, վերանայվեց և խմբագրվեց:

Այս ստանդարտի նպատակը միջազգային մասշտաբով գրքի համարակալման համակարգումն ու ստանդարտացումն է, որպեսզի գրքի միջազգային ստանդարտ համարը (ISBN) նույնականացնի որևէ փաստացի հրատարակչի մեկ գիրքը կամ որևէ անվանմամբ հրատարակությունը և լինի եզակի այդ հրատարակության համար:
Ստանդարտի սկզբնական տարբերակը վերանայվեց, երբ ի հայտ եկան նոր ձևերով լույս տեսած գրքեր և նմանատիպ ստեղծագործություններ, և այսօր համակարգը գործում է շուրջ 160 երկրներում:

Սկսած 2001 թվականից՝ ISBN գործակալությունների ներկայացուցիչներից, հրատարակիչներից, գրավաճառներից, գրադարաններից, համակարգի վաճառողներից և ազգային ստանդարտի կազմակերպություններից առաջադրված ներկայացուցիչներից բաղկացած աշխատանքային խումբը պատրաստեց ստանդարտի 4-րդ հրատարակությունը: 4-րդ հրատարակությունը, հավանաբար, ISBN-ի մինչ օրս եղած ամենածավալուն հրատարակումն է: Այն մեծացրել է համակարգի համարակալումների ծավալը, կարևորել և ընդգծել ISBN-ի նշանակման ժամանակ որոշակի տվյալների տրամադրումը, մշակել համակարգի ղեկավարման և ադմինիստրացիայի վերաբերյալ կանոնները, ինչպես նաև ընգծել ստանդարտի գրանցման իրավունքը: Վերը նշված նպատակներին հասնելու համար, առաջին անգամ ընդունման պահից սկսած, ISBN-ի կառուցվածքը և երկարությունը փոփոխվել է:

Ձեռնարկում նկարագրվում է, թե ինչպես է գործում համակարգը, և այն քայլերը, որոնք անհրաժեշտ են ISBN-ը ճիշտ նշանակելու համար, ինչպես նաև ուղղություն է տրվում տասանիշ ISBN-ի կառուցվածքից նոր առավել լայն կառուցվածքին անցնելու մասին:

2. ISBN-ի առավելությունները

- ISBN-ը հրատարակությունների միջազգային եզակի նույնականացուցիչ է: Շնորհված համարը փոխարինում է մատենագիտական երկար շարադրանքին, խնայում է ժամանակն ու աշխատուժը և բացառում է սխալները պատճենելիս:

- ISBN-ը հեշտացնում է «Տպագրված գրքեր» տեղեկատուն և նմանատիպ այլ տեղեկատուները կազմելու և թարմացնելու գործը: Դրա շնորհիվ կարելի է արագորեն տեղեկություններ ստանալ հրատարակված գրքերի մասին:

- ISBN-ի օգնությամբ է հիմնականում կատարվում գրքերի պատվիրումը և բաշխումը: Այս մեթոդը արագ է և արդյունավետ:

- ISBN-ը մեքենայաընթեռնելի է տասներեքանիշ EAN.UCC գծիկավոր ծածկագրի տեսքով: Այս մեթոդը արագ է և կանխում է սխալները:

- ISBN-ը անհրաժեշտ է գրախանութներում էլեկտրոնային առևտրակետերի աշխատանքի համար:

- Հեղինակային իրավունքների հսկողությունը նույնպես հիմնականում իրականացվում է ISBN-ի միջոցով:

- Վաճառքի տվյալների հաշվառումը կատարվում է ISBN-ի օգնությամբ: Դա թույլ է տալիս հետևելու տարբեր արտադրանքների և հրատարակումների ունեցած հաջողություններին, ինչպես նաև հնարավորություն է տալիս կատարել համեմատություններ տարբեր տարածաշրջանների և նույնիսկ տարբեր հրատարակչությունների միջև:

- Մի շարք երկրներում *փոխատվության իրավունքը* հիմնված է ISBN-ի վրա: Նման սխեման հնարավորություն է ընձեռում հեղինակներին և նկարազարդիչներին ստանալ իրենց վճարներն այն հարաբերությամբ, որքան, որ ազգային գրադարանները օգտագործողներին տրամադրում են նրանց գրքերը:

3. ISBN-ի գործառույթները և գործունեության շրջանակը

Ճանաչված աշխարհի ավելի քան 160 երկրներում՝ գրքի միջազգային ստանդարտ համարը հակիրճ և մատչելի նույնականացուցիչ է, որը մեքենայաընթեռնելի է: ISBN-ը եզակիորեն բնորոշում է առանձին հրատարակությունը և պետք է զուգորդվի նրան վերջինիս ստեղծման սկզբնական շրջանից: Լինելով կարևոր միջոց գրքի շուկայում արտադրության, բաշխման, վաճառքի վերլուծության և մատենագիտական տվյալների պահպանման համակարգում՝ ISBN-ը նաև կարևոր նշանակություն ունի գրադարանի տեղեկատվության համակարգման գործում:

Եթե արտադրանքը համապատասխանում է մեկ այլ յուրահատուկ համարակալման համակարգի (օրինակ՝ շարունակական բնույթ ունեցող նյութեր, որոնց նշանակում են ISSN, կամ երաժշտական (նոտագրական) հրատարակություն, որին նշանակվում է ISMN), ապա պետք է կիրառվի տվյալ համակարգը: Եթե կա անհրաժեշտություն, ապա նման նույնականացուցիչները պետք է կիրառվեն ISBN-ի հետ համակցված (տես՝ բաժին 13.1): Տարբեր տեսակի նույնականացուցիչների վերաբերյալ հավելյալ տեղեկությունը զետեղված է 13 բաժնում:

ISBN նշանակվում է հանրությանը հասանելի վճարովի կամ անվճար առանձին հրատարակություններին և նմանատիպ արտադրանքի որոշակի տեսակներին: Բացի այդ, հրատարակությունների առանձին մասեր (օրինակ՝ գլուխներ կամ հոդվածներ, որոնք հասու են առանձին վերցրած) նույնպես կարող են ունենալ ISBN՝ որպես նույնականացուցիչ: Ինչ վերաբերում է հանրությանը հասանելի տարբեր միջոցների, ապա էական չէ, թե բովանդակությունն ինչպիսի ֆիզիկական ձև ունի, դրանցից յուրաքանչյուրը պետք է նույնականացվի առանձին:

Հրատարակությունների տեսակների մի քանի օրինակներ, որոնք **պետք է** ստանան ISBN.

- տպագրված գրքեր և գրքույկներ,
- բրայլային հրատարակումներ,
- հրատարակություններ, որոնք հրատարակիչը մտադրություն չունի ժամանակ առ ժամանակ նորացնելու,

- շարունակական բնույթ ունեցող նյութերի առանձին հոդվածներ[2],
- քարտեզներ,
- ուսուցողական հրատարակություններ՝ տեսաժապավենի և սլայդի տեսքով,
- ձայներիզներ, լազերային սկավառակներ կամ թվային տեսասկավառակներ (խոսող գրքեր), էլեկտրոնային հրատարակություններ կրիչների վրա (ինչպես օրինակ մեքենայաընթեռնելի ժապավեններ, ճկուն սկավառակներ,
- լազերային սկավառակներ) և ինտերնետային հրատարակումներ,
- առանձին հրատարակությունների թվայնացված օրինակներ,
- միկրոհրատարակություններ,*
- ուսուցողական կամ ուղեցույցային համակարգչային ծրագրեր,
- համակցված հրատարակություններ, որտեղ գլխավոր բաղադրիչը տեքստն է:

Հրատարակությունների տեսակների մի քանի օրինակներ, որոնք **չպետք է** ստանան ISBN.

- շարունակական բնույթ ունեցող հրապարակումներ[3], որոնք դիտվում են որպես մատենագիտական միավորներ (առանձին թողարկումները կարող են հավակնել ISBN-ի),

---

2

- մտավոր և արվեստին վերաբերող բովանդակությամբ վերացական նյութեր[4], ինչպես օրինակ տեքստեր կամ այլ վերացական ստեղծագործություններ,
- կարճաժամկետ նշանակությամբ տպված նյութեր, ինչպես օրինակ գովազդային և այլն,
- տպագրված երաժշտական ստեղծագործություններ,
- արվեստի տպագրված նմուշներ և չկազմված բրոշյուրներ՝ առանց տիտղոսաթերթի և տեքստի,
- անձնական փաստաթղթեր (օրինակ՝ ինքնակենսագրություն),
- շնորհավորական բացիկներ,
- երաժշտական ձայնագրություններ,
- ուսուցողական կամ ուղեցույցային նպատակներից զատ այլ համակարգչային ծրագրեր,
- էլեկտրոնային բյուլետեններ,
- էլեկտրոնային նամակներ և այլ էլեկտրոնային հաղորդագրություններ,
- խաղեր:

ISBN ստանալու մասին հավելյալ տեղեկատվության համար, խնդրում ենք կապվել Ձեր տեղական ISBN գրանցող գործակալության հետ:

4. ISBN-ի կառուցվածքը

2007 թվականի հունվարի 1-ից ISBN գործակալությունները պետք է նշանակեն միայն տասներեքանիշ ISBN, որը ներառում է հետևյալ տարրերը.

- նախածանցային տարր,
- գրանցախմբի տարր,
- գրանցվողի տարր,
- հրատարակության տարր,
- ստուգիչ թիվ:

Նշանակելիս թվերին պետք է անպայման նախորդեն ISBN տառերը:

Ծանոթ. Այն երկրներում, որտեղ չի կիրառվում լատինական այբուբեն, “ISBN” լատինական տառերի կողքին կարող է կիրառվել տեղական տառատեսակից բաղկացած հապավում:

ISBN-ը բաժանվում է 5 տարրերի, որոնցից 3-ը տարբեր չափսի են, իսկ առաջինը և վերջինը սահմանված չափսի: Մարդու աչքի ընկալման համար տարրերը պետք է հստակորեն բաժանվեն իրարից գծիկով կամ պարզապես բացատով:

ISBN 978-0-571-08989-5
կամ
ISBN 978 0 572 08989 5

Ծանոթ. Գծիկների կամ բացատի կիրառումը չունի բառագիտական նշանակություն: Այն պարզապես արվում է ընթեռնելիությունը հեշտացնելու նպատակով:

ISBN-ի երկրորդ, երրորդ և չորրորդ տարրերի (գրանցախմբի տարր, գրանցվողի տարր, հրատարակության տարր) նիշերի քանակը տարբերվում է: Գրանցախմբի տարրի և գրանցվողի տարրի երկարությունը կախված է գրանցվողի կամ գրանցախմբի հրատարակչական նախնական արտադրողականությունից: Երբ այս տարրերը կարճ են, դա նշանակում է, որ գրանցախմբի կամ գրանցվողի (կամ երկուսինը միասին) արտադրողական շրջանառությունը լինելու է բավականաչափ մեծ քանակի:

4.1 Նախածանցային տարր

ISBN-ի առաջին տարրը 3 նիշից բաղկացած թիվ է, որը տրվել է EAN միջազգային կազմակերպության կողմից: EAN միջազգային կազմակերպության կողմից արդեն տրված նախածանցներն են՝ 978 և 979, բայց ապագայում կարող են լինել նոր բաշխումներ՝ ապահովելու համար ISBN համակարգի հետագա ծավալվելու հնարավորությունը:

Նախածանցային տարրի օրինակն է՝ 978:

4.2 Գրանցախմբի տարր

ISBN-ի 2-րդ տարրը նույնականացնում է երկիրը, աշխարհագրական տարածքը, կամ լեզվատարածաշրջանը, որոնք կցված են ISBN համակարգին: ISBN համակարգի որոշ անդամներ ձևավորում են լեզվական տարածաշրջան (օր.՝ N 3 գրանցախումբը գերմանական լեզվախումբն է), մյուսները ձևավորում են ռեգիոնալ խմբեր (օր.՝ N 982 գրանցախումբը հարավային խաղաղօվկիանոսյանն է): Այս տարրի երկարությունը տարբեր է, բայց կարող է ներառել մինչև 5 նիշ:

Գրանցախմբային տարրերը բաշխվում են ISBN միջազգային գործակալության կողմից:

Օր.՝ 978-0

4.3 Գրանցվողի տարր

ISBN-ի 3-րդ տարրը գրանցախմբի ներսում նույնականացնում է տվյալ հրատարակչին: Այս տարրի երկարությունը տարբերվում է՝ կախված հրատարակչի արտադրողականությունից և կարող է ներառել մինչև 7 նիշ: Առավել մեծ արտադրողականություն ունեցող հրատարակիչներին տրվում է ամենակարճ գրանցվողի տարրը և հակառակը:

Պոտենցիալ գրանցվողները գրանցվողի տարր ստանալու համար դիմում են ISBN խմբի գործակալությանը, որը պատասխանատու է իր երկրում, տարածաշրջանում, լեզվախմբում ISBN համակարգի ղեկա-

վարման համար: Գրանցվողի տարրի հետ կապված իրենց հատկացված ISBN-ների սպառման դեպքում, նրանք կարող են ստանալ լրացուցիչ գրանցվողի տարր:

Օր.՝ 978-0-11

4.4 Հրատարակության տարր

ISBN-ի 4-րդ տարրը նույնականացնում է հրատարակության փաստացի թողարկում՝ տվյալ հրատարակչության կողմից: Այս տարրի երկարությունը կախված է անմիջապես հրատարակչի արտադրողական շրջանառությունից և կարող է ներառել մինչև 6 նիշ: Առավել մեծ արտադրողականություն ունեցող հրատարակիչներին տրվում են առավել երկար հրատարակության տարրեր և հակառակը: ISBN-ի ճիշտ երկարությունը պահպանելու համար տարրը սկսվում է զրոներով:

Օր.՝ 978-0-10-000222

4.5 Ստուգիչ թիվ

ISBN-ի 5-րդ տարրը ստուգիչ թիվն է: Այն հաշվվում է օգտագործելով մոդուլ 10 ալգորիթմը:
ISBN-ի առաջին 12 նիշերից յուրաքանչյուրը հաջորդաբար բազմապատկվում է 1-ով և 3-ով: Ստուգիչ թիվը գոյանում է հետևյալ ձևով. 10-ից հանած մնացորդը, որն առաջացել է առաջին 12 նիշերի արտադրյալների գումարը 10-ի բաժանելով: Կա մեկ բացառություն՝ եթե այս հաշվարկի արդյունքում ստանում ենք 10, ապա ստուգիչ թիվը 0-ն է:

Կիրառի՛ր հետևյալ քայլերը՝ հաշվելու ստուգիչ թիվը հետևյալ ISBN-ի համար՝ 978-0-11-000222

Քայլ 1-ին. Որոշի՛ր ISBN-ի առաջին 12 նիշերի արտադրյալների գումարը (տե՛ս աղյուսակը):

	Նախածան-ցային տարր			Գրան-ցա խմբի տարր	Գրանցվ ողի տարր		Հրատարակության տարր						Ստու-գիչ թիվ	Գու-մարը
ISBN	9	7	8	0	1	1	0	0	0	2	2	2	?	
Բազմա-պատկիչ	1	3	1	3	1	3	1	3	1	3	1	3	-	
Արտա-դրյալ	9	21	8	0	1	3	0	0	0	6	2	6	-	56

Քայլ 2-րդ. Բաժանի՛ր ISBN-ի առաջին 12 նիշերի արտադրյալների գումարը, որը հաշվարկվում է 1 - 10 քայլերով և որոշի՛ր մնացորդը:

56/10=5 մնացորդը=6

Քայլ 3-րդ. 10-ից հանել 2-րդ քայլում հաշվված մնացորդը: Արդյունքում ստացված տարբերությունը հավասար է ստուգիչ թվին՝ մեկ բացառությամբ, եթե մնացորդը 2-րդ քայլից 0 է, ապա ստուգիչ թիվը 0-ն է:

10-6=4

Ստուգիչ թիվ=4

ISBN 978-0-11-000222-4

Հետևյալ մաթեմատիկական բանաձևը մեկ այլ միջոց է ստուգիչ թիվը հաշվելու համար:

Ստուգիչ թիվը= մոդուլ 10 (10- [մոդուլ 10 {առաջին 12 նիշերի արտադրյալների գումարը }])

Ստուգիչ թիվ = մոդուլ 10 (10- [մոդուլ 10 {56}])

Ստուգիչ թիվ = 4

ISBN-ի առաջին 12 նիշերի արտադրյալների գումարը ստուգիչ թվի հետ հավելյալ պետք է բաժանվի 10-ի՝ առանց մնացորդի, որպեսզի ISBN-ը համարվի գործող:

Ծանոթ. Գրանցախմբի, գրանցվողի և հրատարակության տարրի երկարությունները տարբեր են և կարող են նման չլինել վերևում բերված օրինակին: Ոչ բոլոր գրանցախումբ և գրանցող համակցություններն են գործող: Տե՛ս *Համարախմբերի բաշխումը* բաժինը՝ ISBN-ը գործուն դարձնելու համար տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով:

Խնդրում ենք կապվել Ձեր տեղական գրանցող գործակալության հետ, որը կօգնի Ձեզ հաշվելու ISBN-ները, կտրամադրի նախապես հաշվված ISBN-ի ցուցակը, կամ էլ համակարգչային ծրագիր, որպեսզի դուք ինքներդ հաշվեք Ձեր ISBN-երը:

4.6 Համարախմբերի բաշխումը

Համարախմբերը բաշխվում են համաձայն սպասվող պահանջարկի՝ (այսինքն հրատարակչական ծրագրի ծավալի) որոշակի տարածքային կամ լեզվական խմբի ներսում: Որոշ գրանցախմբային տարրեր պահեստային հիմունքներով պահվում են ISBN միջազգային գործակալության կողմից, որպեսզի ապահովեն հետագա ծավալումները: ISBN միջազգային գործակալությունը կբաշխի դրանք այն ժամանակ, երբ որևէ խմբում համարախմբերը կնվազեն: Որպես հավելում նկատենք, որ որոշակի տարածքային և լեզվական խմբավորումներին արդեն բաշխված գրանցվողի տարրերը կարող են չօգտագործվել գրանցախմբի ներսում հետագա պահանջները բավարարելու համար:

Գրանցախմբերի և գրանցվողի համարախմբի վերաբերյալ լիարժեք տվյալներ կարելի է ստանալ ISBN միջազգային գործակալությունից, որն էլ հնարավորություն կտա ստուգելու ընթացիկ բաշխված համարախմբերի ճշգրտությունը: Ոչ բոլոր գրանցախումբ և գրանցվող զուգակցություններն են լինում ճշգրիտ: Բանաձևի վերաբերյալ տեղեկությունը, որը (օգտագործելով ամբողջական խմբի և գրանցվողի համարախմբի տվյալները) պահանջում է տարանջատել ISBN-ը բաղկացուցիչ մասերի, ներկայացված է ստորև: Տե՛ս *Ստուգիչ թիվ* բաժինը ստուգիչ թիվը հաշվելու և վավերացնելու տեղեկատվության համար:

ISBN-ի տարրերից յուրաքանչյուրի թվաքանակը (գրանցախմբային տարրի, գրանցվողի և հրատարակության տարրերի) տարբեր է, սակայն այս երեք տարրերում ներառվող նիշերն ընդհանուր առմամբ ինն են: Այս ինը նիշերը եռանիշ նախածանցային տարրի և ստուգիչ թվի

հետ միասին կազմում են տասներեքանիշ ISBN: Գրանցախմբի և գրանցվողի տարրերում նիշերի թիվը կարող է տատանվել՝ կախված գրանցախմբի կամ գրանցվողի հրատարակչական ծավալից: Այն գրանցախմբերը, որոնք նախատեսում են մեծաքանակ հրատարակություններ, կստանան մեկ կամ երկու նիշից բաղկացած խմբային նույնականացուցիչ: Այն հրատարակիչները, որոնք նախատեսել են մեծ ծավալի հրատարակումներ, կստանան երկու կամ երեք նիշից բաղկացած գրանցվողի համարներ:

Ծանոթ. 978 նախածանցային տարրի շրջանակներում սահմանված և հատկացված նիշերի քանակից չի կարելի կանխագուշակել հետագա նախածանցային տարրերի շրջանակներում սահմանվելիք և նշանակվելիք նախածանցային տարրերը (օր.՝ նախածանցային տարր 979): Գրանցախմբերը և գրանցվողների բաշխումները ապագա նախածանցերի համար կարտացոլեն վերջիններիս հատկացման պատմությունը և նախագիծն ամբողջ նախածանցային տարրերի համակարգի համար՝ որպես համընդհանուր պատկեր:

Տասներեքանիշ ISBN-ի ներքին բաժանումը երկու քայլից բաղկացած գործընթաց է: Առաջինը. որոշի՛ր գրանցախմբերը, կիրառելով ISBN-ի համար սահմանված նախածանցային տարրերի կանոնները, երկրորդը. որոշի՛ր գրանցվողի և հրատարակության տարրերի երկարությունը, կիրառելով գրանցախմբերի: Գրանցախմբային տարրերի կանոնները կարող եք ձեռք բերել ISBN միջազգային գործակալությունում:

Աղյուսակ 1-ը ցուցադրում է 978 նախածանցային տարրի շրջանակներում կիրառվող գրանցախմբերի համարների բաշխումը: Մեկ այլ ցանկացած EAN.UCC նախածանց, որը սահմանված կլինի կիրառվելու ISBN համակարգի շրջանակներում, մինչև տվյալ EAN.UCC նախածանցի ներքո գրանցախումբի նշանակումը, կունենա ISBN միջազգային գործակալության կողմից տրամադրված գրանցախմբերի կանոններ: *Խորհուրդ է տրվում ժամանակ առ ժամանակ ճշտել ISBN միջազգային գործակալության հետ գրանցախմբերում տեղի ունեցող հավանական հավելումներն ու փոփոխությունները:*

Աղյուսակ 1. 978 նախածանցային տարրի գրանցախմբային համարների բաշխումը

Նախածանցային տարր	Գրանցախմբային տարրի համարը	Յուրաքանչյուր գրանցախմբի հնարավոր համարաքանակը
978	0-5 6 7 80-94 950-989 9900-9989 99900-99999	100,000,000 չորոշված համար 100,000,000 10,000,000 1,000,000 100,000 10,000

Աղյուսակ 2-ը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է ստանալ 978 նախածանցային տարրի գրանցախմբի կառուցվածքը, որը նշանակված է ISBN-ի համար: Նախածանցային տարրին հաջորդող հինգ նիշերի ուսումնասիրությունը թույլ կտա որոշելու գրանցախմբային տարրի երկարությունը: Հենց որ որոշվի գրանցախմբի երկարությունը, կարելի է սահմանել գրանցախումբը:

Աղյուսակ 2. 978 նախածանցային տարրի գրանցախմբի կառուցվածքի ձևավորման մեթոդը

Եթե նախածանցային տարրին հաջորդող հինգ թվերը գտնվում են ստորև նշված սահմաններում	Ապա գրանցախմբի երկարությունը կլինի	Նախածանցային տարրի և գրանցախմբի բաժանումները կլինեն հետևյալ թվերից և համապատասխան տարրերից հետո
00000-59999 60000-69999	1 0 (չսահմանված)	3 (նախածանցային տարր) 4 (գրանցախումբ) (չսահմանված համարախումբ)

70000-79999	1	3 (նախածանցային տարր) 4 (գրանցախումբ)
80000-94999	2	3 (նախածանցային տարր) 5 (գրանցախումբ)
95000-98999	3	3 (նախածանցային տարր) 6 (գրանցախումբ)
99000-99899	4	3 (նախածանցային տարր) 7 (գրանցախումբ)
99900-99999	5	3 (նախածանցային տարր) 8 (գրանցախումբ)

Գրանցվող տարրի երկարությունը սահմանվում է ISBN գրանցող գործակալությունների կողմից յուրաքանչյուր գրանցախմբի ներսում՝ իրենց տարածաշրջանում ծավալած հրատարակչական գործունեության կարիքներին համապատասխան: Յուրաքանչյուր գրանցախմբին հատկացվող համար պետք է նախօրոք հաստատվի ISBN միջազգային գործակալության կողմից՝ նախքան այդ խմբի հրատարակիչներին ISBN համարների բաշխումը:

Օր. 1

Փորձնական ISBN	978000000004
EAN.UCC նախածանց	978
(գրանցախմբի փորձնական հատվածամաս)	60000
Գրանցախումբ	(չորոշված և չգործող)

Ծանոթ. Այս փորձնական ISBN-ը գործող չէ, քանի որ գրանցախմբի փորձնական հատվածամասը գտնվում է 60000-69999 համարախմբում, որն ունի սահմանված խմբի երկարություն «0» (դեռևս չորոշված):

Օր. 2

Փորձնական ISBN	9780777777770
EAN.UCC նախածանց	978
(գրանցախմբի փորձնական հատվածամաս)	07777
Գրանցախումբ	0

Ծանոթ. Այս փորձնական ISBN-ը գործող է, քանի որ գրանցախմբի փորձնական հատվածամասը գտնվում է 00000-59999 համարախմբում, որն ունի սահմանված գրանցախմբի երկարություն «1» (որոշված և գործող):

Աղյուսակ 3-ը ցույց է տալիս 978-0 գրանցախմբի հատվածում ընկած գրանցվողի տարրի համարները և հրատարակության տարրերը: Յուրաքանչյուր գրանցախմբի համար կիրառվող գրանցվողի տարրերը սահմանվում են ISBN միջազգային գործակալության կողմից՝ ելնելով տվյալ գրանցախմբի համար նախատեսված հրատարակչական ծրագրերից:

Աղյուսակ 3. 978-0 խմբի գրանցվողի տարրի համարների և հրատարակության տարրերի բաշխումը

Գրանցախումբ	Գրանցվողի տարրի համար	Հրատարակության նույնականացման համար յուրաքանչյուր գրանցվողին հատկացվող թվեր
978-0	00-19 200-699 7000-8499 85000-89999 900000-949999 9500000-9999999	1,000,000 100,000 10,000 1,000 100 10

Աղյուսակ 4-ը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է ստանալ 978-0 գրանցախմբի ներքին կառուցվածքը: Գրանցախմբի տարրին հաջորդող հինգ նիշերի զննումը թույլ կտա սահմանել գրանցվող տարրի երկարությունը: Հենց որ որոշվի գրանցվող տարրի երկարությունը, կարելի է սահմանել հրատարակության տարրի երկարությունը:

Աղյուսակ 4. 978-0 գրանցախմբի ներքին կառուցվածքը սահմանելու մեթոդը

Եթե գրանցախմբին հաջորդող 5 թվերը գտնվում են ստորև նշված սահմաններում	Գրանցվողի տարրի երկարությունն է	Հրատարակության տարրի երկարությունն է	Ներքին բաժանումները կլինեն հետևյալ թվերից և համապատասխան տարրերից հետո
00000-19999	2	6	3 (նախածանց) 4 (գրանցախումբ) 6 (գրանցվող) 12 (հրատարակություն)
20000-69999	3	5	3 (նախածանց) 4 (գրանցախումբ) 7 (գրանցվող) 12 (հրատարակություն)
70000-84999	4	4	3 (նախածանց) 4 (գրանցախումբ) 8 (գրանցվող) 12 (հրատարակություն)
85000-89999	5	3	3 (նախածանց) 4 (գրանցախումբ) 9 (գրանցվող) 12 (հրատարակություն)
90000-94999	6	2	3 (նախածանց) 4 (գրանցախումբ) 10 (գրանցվող) 12 (հրատարակություն)
95000-99999	7	1	3 (նախածանց) 4 (գրանցախումբ) 11 (գրանցվող) 12 (հրատարակություն)

Օր.՝

Փորձնական ISBN	9780777777770
EAN.UCC նախածանց	978
Գրանցախումբ (գրանցախմբի փորձնական հատվածամաս)	0 7777
Գրանցվող	7777
Հրատարակություն	7777
Ստուգիչ թիվ	0
Տեղադրվող ISBN	978-0-7777-7777-0

Ծանոթ. Գրանցախմբի փորձնական հատվածամասը գտնվում է 70000-84999 համարախմբի սահմաններում, որն ունի գրանցվողի տարրի սահմանված երկարություն «4» (որոշված և գործող):

Աղյուսակ 5-ը ցույց է տալիս գրանցվողի համարների բաշխումը և յուրաքանչյուր գրանցվողի հրատարակությունների առավելագույն քանակը 978-952 գրանցախմբի շրջանակներում:

Աղյուսակ 5. Գրանցվողի համարների բաշխումը և 978-952 գրանցախմբի հրատարակությունները

Գրանցախումբ	Գրանցվողի տարրի համարը	Յուրաքանչյուր գրանցվողին հատկացվող հրատարակությունը նույնականացնող թույլատրելի համարներ
978-952	00-19 200-499 5000-8899 89-94 9500-9899 99000-99999	10,000 1,000 100 10,000 100 10

Աղյուսակ 6-ը ցույց է տալիս, թե ինչպես ստանալ 978-952 գրանցախմբի ներքին կառուցվածքը: Գրանցախմբի տարրին հաջորդող հինգ նիշերի զննումը թույլ կտա սահմանել գրանցվողի տարրի երկարությունը: Հենց

որ որոշվի գրանցվող տարրի երկարությունը, կարելի է սահմանել նաև հրատարակության տարրի երկարությունը:

Աղյուսակ 6. 978-952 գրանցախմբի ներքին կառուցվածքը ստանալու մեթոդը:

Եթե գրանցախմբին հաջորդող 5 նիշերը գտնվում են ստորև նշված սահմաններում	Գրանցվողի տարրի երկարությունն է	Հրատարակության տարրի երկարությունն է	Ներքին բաժանումները կլինեն հետևյալ թվերից և համապատասխան տարրերից հետո
00000-19999	2	4	3 (նախածանց) 6 (գրանցախումբ) 8 (գրանցվող) 12 (հրատարակություն)
20000-49999	3	3	3(նախածանց) 6(գրանցախումբ) 9(գրանցվող) 12(հրատարակություն)
50000-88999	4	2	3(նախածանց) 6(գրանցախումբ) 10(գրանցվող) 12(հրատարակություն)
89000-94999	2	4	3(նախածանց) 6(գրանցախումբ) 11(գրանցվող) 12(հրատարակություն)
95000-98999	4	2	3(նախածանց) 4(գրանցախումբ) 10(գրանցվող) 12(հրատարակություն)
99000-99999	5	1	3(նախածանց) 4(գրանցախումբ) 11(գրանցվող) 12(հրատարակություն)

Օր.՝

Փորձնական ISBN	9789528988885
EAN.UCC նախածանց	978
Գրանցախումբ	952
(գրանցախմբի	
փորձնական հատվածամաս)	89888
Գրանցվող	89
Հրատարակություն	8888
Ստուգիչ թիվ	5
Տեղադրվող ISBN	978-952-89-8888-5

Ծանոթ. Գրանցախմբի փորձնական հատվածամասը գտնվում է 89000-94999 համարախմբի սահմաններում, որն ունի գրանցվողի տարրի սահմանված երկարություն «2» (որոշված և գործող):

5. ISBN-ի կիրառումը

5.1 Ընդհանուր դրույթներ

Առանձին ISBN պետք է ունենա յուրաքանչյուր գիրք կամ հրատարկչի կողմից հրատարակած գրքի յուրաքանչյուր հրատարակություն: Առանձին ISBN-ներ պետք է նշանակվեն նույն գրքի այլալեզու տարբերակներին: Եթե գիրքը ներկայացվում է ընթերցողին և՝ առանձին, և՝ որպես շարքի բաղկացուցիչ մաս, ապա այն պետք է դիտարկվի որպես երկու առանձին հրատարակություններ, որոնցից յուրաքանչյուրին պետք է հատկացվի առանձին ISBN:

5.2 Փոփոխություններ հրատարակության մեջ

Առանձին ISBN պետք է նշանակվի, եթե գիրքը կամ գրքի որոշ մաս ենթարկվել է զգալի փոփոխությունների: Առանձին ISBN պետք է նշանակվի, եթե փոփոխություն է տեղի ունեցել գրքի վերնագրում: Գրքի կազմի ձևավորման, գույնի և արժեքի հետ կապված փոփոխությունները չեն պահանջում նոր ISBN: Գրքում կատարվող այլ մանր փոփոխությունները (օր.՝ վրիպակների շտկումը) չեն պահանջում նոր ISBN:

5.3 Ճշգրիտ (ֆաքսիմիլային) վերատպություններ

Առանձին ISBN պետք է նշանակվի, եթե նույն գիրքը վերատպվում է մեկ այլ հրատարակչի կողմից: Առանձին ISBN պետք է նշանակվի, եթե նույն գիրքը հրատարակվում է նույն հրատարակչի կողմից, բայց այլ տպագրությամբ:

Օրինակ՝ Հայներ Փլոուլի "Illustriete Karl- May-Bibliographie” գիրքը հրատարակված «Լայփցիգ» հրատարակչությունում 1988-ին (ISBN 3-361-00145-5): Նույն գրքի վերատպված տարբերակին, հրատարակված «Սոուր» հրատարակչությունում 1989-ին, հատկացվել է առանձին ISBN (ISBN 3-598-07258-9):

5.4 Գրքի տպագրական տարբեր ձևերը

Գրքի տպագրական տարբեր ձևերը (կոշտ կազմ, թղթե կազմ, Բրայլ, աուդիոգիրք, առցանց էլեկտրոնային հրատարակություն) պահանջում են առանձին ISBN-ներ: Եթե էլեկտրոնային գիրքը հասանելի է տարբեր ֆորմատներով (օր.՝ lit., pdf., html., pdb.), ապա յուրաքանչյուր առանձին ֆորմատի պետք է հատկացնել առանձին ISBN:

5.5 Առանց կազմի հրատարակություններ

ISBN պետք է հատկացվի այն առանց կազմի հրատարակություններին, որոնք շարունակական չեն:

Եթե առանց կազմի հրատարակությունները կամ նրանց առանձին մի մասը շարունակաբար թարմացվում են, ապա նրանց ISBN չի նշանակվում (տե՛ս բաժին 13.7):

5.6 Բազմահատոր հրատարակություններ

Հրատարակությունները կարող են ներառել ավելի քան մեկ հատոր, և այս դեպքերում ISBN պետք է հատկացվի ամբողջական հավաքածուին: Եթե հավաքածուի հատորները հասանելի են որպես առանձին գրքեր, ապա նրանցից յուրաքանչյուրին հատկացվում է առանձին ISBN: Տիտղոսաթերթի դարձերեսին (եթե տպագրություն չէ, ապա այլ համապատասխան տեղում), պետք է զետեղվեն և՛ ամբողջ հավաքածուի, և՛ տվյալ հատորի ISBN-ները:

Նունիսկ, եթե հավաքածուի հատորներն առանձին հասանելի չեն, ապա այդ դեպքում ևս նախընտրելի է հավաքածուի յուրաքանչյուր հատորին առանձին ISBN հատկացնելը: Սա ավելի կհեշտացնի տարբեր կարգի գործողությունները, ներառյալ փոխադրման գործընթացը, երբ բոլոր հատորները միաժամանակ չեն հրատարակվում և տարածվում:

5.7 Տպագրված գրքերի ցանկ

Հրատարակչից պահանջվում է համարակալել իր կողմից տպագրված գրքերը և հրատարակել դրանց ISBN-ները որևէ տեղեկատուում՝ տպագիր կամ էլեկտրոնային ֆորմատով: ISBN-ը պետք է նշվի տպագրված գրքերի առաջին վերահրատարակության վրա:

5.8 Համատեղ հրատարակություններ

Եթե հրատարակությունը թողարկվում է որպես մի քանի հրատարակիչների համատեղ աշխատանք, ապա սովորաբար գրքին ISBN նշանակում է գրքի տարածման համար պատասխանատու հրատարակիչը(նները): Թույլատրելի է նաև համահրատարակիչներից յուրաքանչյուրին նշանակել իրենց սեփական ISBN-ը և այն զետեղել հեղինակային իրավունքի էջում: Այս դեպքում ISBN-ներից միայն մեկը կարող է օգտագործվել գծիկավոր ծածկագրի համար:

5.9 Գործակալների միջոցով վաճառվող կամ տարածվող հրատարակություններ

(Բացառությամբ ա. և բ. կետերի, սա վերաբերում է միայն այն երկրներին, որոնք դեռ ISBN համակարգի անդամ չեն):

ա. ISBN ստանդարտի համաձայն, որոշակի հրատարակչի կողմից հրատարակված որոշակի գիրք ստանում է միայն մեկ ISBN: Այս ISBN-ը պահպանվում է անկախ այն բանից, թե ում կողմից և որտեղ է գիրքը տարածվում կամ վաճառվում:

բ. Գիրքը, որը չունի ISBN և ներմուծվում է բացառիկ տարածողի կամ գործակալի կողմից մի երկրից, որը ISBN համակարգի անդամ չէ, կարող է ISBN ստանալ բացառիկ տարածողի կողմից:

գ. Եթե բացառիկ տարածողների կամ գործակալի կողմից ներմուծվող գրքի բնօրինակի տիտղոսաթերթին ավելանում է նոր տիտղոսաթերթ, որը կրում է բացառիկ տարածողի անունը, ապա բնօրինակի ISBN-ի հետ միասին նրան պետք է հատկացվի նոր ISBN:

դ. ISBN համակարգի անդամ չհանդիսացող որևէ երկրից մի քանի

տարածողների կողմից ներմուծվող գիրքը, որը չունի ISBN, կարող է ստանալ ISBN այդ տարածողների համար պատասխանատու գործակալության կողմից:

5.10 Հրատարակչության ձեռք բերումը մեկ այլ հրատարակչի կողմից

Հրատարակչությունը ձեռք բերած մեկ այլ հրատարակիչն իրավասու է շարունակել օգտագործել ի սկզբանե հատկացված ISBN-ը:

5.11 Գրքի ամբողջական պաշարների և իրավունքների ձեռք բերումը

Գրքի ամբողջական պաշարները և իրավունքները ձեռք բերած հրատարակիչը կարող է շարունակել օգտագործել ի սկզբանե հատկացված ISBN-ը՝ մինչև գրքի վերատպումը նոր ընկերության կողմից իր սեփական ISBN-ով:

5.12 Մեկից ավելի վայրերում հրատարակչություններ ունեցող հրատարակիչներ

ա. Մի քանի վայրերում գործող հրատատակչությունները, որոնք հանդես են գալիս մեկ ընկերության անվան տակ, պետք է ունենան միասնական մեկ ISBN:

բ. Տարբեր վայրերում առանձին գործող գրասենյակները և մասնաճյուղերը կարող են ունենալ իրենց առանձին գրանցման նույնականացուցիչ տարրը: Սակայն յուրաքանչյուր գիրք պետք է ունենա միայն մեկ ISBN՝ տրված տվյալ գրքի համար պատասխանատու գրասենյակի կամ մասնաճյուղի կողմից:

5.13 ISBN-ների գրանցումը և տվյալների հավաքագրումը

Հրատարակիչները պարտավոր են տեղեկացնել իրենց գործակալություններին կամ հրատարակությունները գրանցող կազմակեր-

պություններին առաջիկայում հրատարկվող գրքերին հատկացվող ISBN-ների մասին: Տեղեկատվությունը պետք է ներառի որոշակի անհրաժեշտ տվյալներ, ինչպես նաև համապատասխանի ONIX միջազգային տեղեկատվական չափանիշներին՝ հաստատված EDItUR-ի և իրեն գործակից կազմակերպությունների կողմից:

Տվյալներ	Մեկնաբանություններ	ONIX տարրեր
ISBN	Տասներեքանիշ ֆորմատով	<Գրքի նույնականացուցիչ>
Գրքի ձևը	Ծածկագիր, որը ցույց է տալիս հրատարակման միջոցը կամ ֆորմատը	<Գրքի ձևը> <էլեկտր. հրատֆորմատ>
Վերնագիր	Գրքի վերնագիրը և ենթավերնագիրը, եթե կիրառելի է	<Վերնագիր> բաղադրյալ
Շարք (սերիա)	Շարքի վերնագիրը և ցանկը, եթե կիրառելի է	<Շարք> բաղադրյալ
Ներդրող	Ներդրողի ծածկագիրը և անունը	<Ներդրող> բաղադրյալ
Հրատարակություն	Հրատարակության համարը (կիրառելի է առաջին հրատարակությունից հետո), ձևը և ուղերձը	<<Հրատարակության ձևի ծածկագիրը> <<Հրատարակության համարը> <<Հրատարակության ուղերձը>
Լեզուն(երը)	ISO 639-2/B լեզուների ծածկագրի օգտագործումը	<Լեզու> բաղադրյալ
Ելից տվյալներ	Այն կազմակերպության անվանումը, որի անվանմանբ հրատարակվում է գիրքը	<<Հրատարակչության անունը>
Հրատարակիչ	Անձը կամ կազմակերպությունը, որն ունի գրքի հրատարակության իրավունք	<<Հրատարակիչ> բաղադրյալ
Հրատարա-	ISO 3166-1 օգտագործելով	<<Հրատարակության

կության վայրը	երկրի ծածկագիրը	երկիրը>
Հրատարա-կության ամ-սաթիվը	Տվյալ ISBN-ով առաջին հրատարակության անսա-թիվը ISO ֆորմատով (տարի-ամիս-օր)	<<Հրատարակության ամսաթիվը>
Աղբյուր հան-դիսացող գրքի ISBN-ը	Աղբյուր հանդիսացող գրքի ISBN-ը, որի մի մասն է կազում տվյալ հրատարա-կությունը, եթե կիրառելի է	<<Հարակից հրատարակություն> բաղադրյալ

ISBN միջազգային գործակալությունը՝ տվյալների մուտքագրմանն ա-ջակցելու համար, կառաջարկի XML սխեմա և համակարգչային ծրա-գիր: Սխեմայի հետ առնչվող հավելյալ տեղեկատվություն կարող եք գտնել հետևյալ կայքում՝ www.editeur.org/onix_isbn.html:

Տվյալների էլեկտրոնային շտեմարանները, որոնց միջոցով ստանում են ISBN-ների տվյալները (օր.՝ տպագրության հանձնված գրքերի ցանկ, ազգային մատենագիտություն և այլն), պետք է միշտ հասանելի լինեն և թարմացվեն: Եթե գրանցված ISBN գործակալությունները չեն տրա-մադրում նման տեղեկություններ, ապա նրանք պարտավոր են կապ հաստատել համապատասխան ծառայություններ մատուցող կազմա-կերպությունների հետ՝ երաշխավորելու համար նման ծառայություննե-րի հասանելիությունը: ISBN գործակալությունները կամ մատենագի-տական տվյալների հրատարակիչները կարող են որոշակի գումար գանձել իրենց ծառայություններից օգտվողներից՝ տեղեկություն տրա-մադրելու համար:

5.14 ISBN-ները երբեք չեն կարող կիրառվել երկրորդ անգամ

Մեկ գրքին շնորհված ISBN-ը երբեք չի կարող օգտագործվել այլ գրքի համար, նույնիսկ եթե այն նշանակվել է սխալմամբ: Սխալ նշանակված ISBN-ը պետք է դուրս գա կիրառվող համարների ցանկից, և դրա մա-սին պետք է տեղեկացվի ISBN գործակալությունը:

6. ISBN-ը էլեկտրոնային հրատարակությունների և ուսուցողական / հրահանգչական ծրագրերի համար

6.1 ISBN-ը համապատասխան էլեկտրոնային հրատարկությունների համար

Հրատարակությանը, որը ներկայացված է էլեկտրոնային տարբերակով (օր.՝ էլեկտրոնային գիրք, CD-ROM կամ ինտերնետում առկա հրատարակություններ), կարելի է հատկացնել ISBN, եթե այն ներառում է տեքստ, հասանելի է հասարակության համար և չունի շարունակական բնույթ:

Այսպիսի հրատարակությունները կարող են նաև ունենալ պատկերներ և ձայնային ձևավորում, սակայն մեջբերված նյութը (օր.՝ գերտեքստ) հանդես կգա նույն ISBN-ի տակ, եթե այն կազմում է հրատարակության մաս:

ISBN չի նշանակվում էլեկտրոնային հրատարակությունների հետևյալ տեսակներին.

- հաճախակի թարմացվող հրատարակություններ, երբ հնարավորություն կա անմիջապես ստանալու փոփոխված տվյալները՝ ինչպես օրինակ առցանց տեղեկատուներ,
- կայքեր,
- գովազդային նյութեր,
- տեղեկագրեր,
- էլեկտրոնային հասցեներ,
- որոնող միջոցներ,
- խաղեր,
- անձնական փաստաթղթեր
  (օր.՝ էլեկտրոնային ինքնակենսագրություն),
- ժամանակացույցեր / օրագրեր:

6.2 ISBN-ը համապատասխան համակարգչային արտադրանքների համար

ISBN կարող է նշանակվել ուսուցողական կամ հրահանգչական հատուկ ծրագրեր նույականացնելու համար, ինչպես օրինակ համակարգչային ուսուցողական ծրագրեր, որոնք օգտագործվում են առանց կարգավորման և տվյալների ներմուծման:

Մնացած բոլոր ծրագրերին (օր.՝ համակարգչային խաղեր) ISBN չեն նշանակում:

6.3 Էլեկտրոնային հրատարակություններին և ծրագրերին ISBN նշանակելու սկզբունքները

- Եթե հատուկ որակավորված հրատարակությունը կամ ծրագիրը ներկայացվում է տարբեր սպասարկող համակարգերի և լեզուների կիրառմամբ, ապա յուրաքանչյուր առանձին ֆորմատին պետք է հատկացվի առանձին ISBN: Ոչ սպասարկող համակարգերը, ոչ էլ ծրագիրը կարդացող սարքերը չեն կարող ստանալ ISBN:

- Եթե հրատարակությունը կամ ծրագիրը թարմացվում, վերանայվում կամ բարեփոխվում է, և փոփոխություններն այնքան զգալի են, որ հրատարակությունը կարելի է համարել նոր թողարկում, ապա նոր ISBN պետք է հատկացվի:

- Առկա հրատարակության կամ ծրագրի վերաթողարկումը, նույնիսկ նոր փաթեթավորմամբ, երբ չկան զգալի տարբերություններ հնի և նորի միջև, չի պահանջում նոր ISBN: Առկա ISBN-ը շարունակվում է օգտագործվել:

- Մեկ ISBN-ը փաթեթում կարող է ընդգրկել երկու կամ ավելի նմուշներ՝ կազմված ծրագրային արտադրանքից և կիրառողի համար տեխնիկական ձեռնարկից, եթե այն անհրաժեշտ է ծրագիրը գործածելու համար և հանդես է գալիս միայն որպես ծրագրի հավելված:

- Եթե փաթեթն ընդգրկում է երկու և ավելի նմուշներ, որոնք կարող

են օգտագործվել իրարից անջատ, ապա և ամբողջական փաթեթը, և բաղադրիչներից յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին ISBN:

- ISBN պետք է նշանակվի ծրագրային արտադրանքին՝ անկախ վերջինիս ձևից (օր.՝ հեռադիր տվյալների շտեմարանից սպառողին տրամադրվող ծրագիր):

- Նույնականցնելով արտադրանքը՝ ISBN-ը նույանականացնում է նաև հրատարակչին: Այն չպետք է օգտագործվի նույնականացնելու արտադրանքի տարածողին կամ մեծաքանակ վաճառողին:

7. ISBN պատվիրված հրատարակությունների համար

Պատվիրված հրատարակությունը տպագրվում և կազմվում է համաձայն հաճախորդի պատվերի: Այսպիսի պատվերները հաճախակի եզակի օրինակներ ունեցող հրատարակություններ են, որոնք այլ կերպ կճանաչվեն «տպագրությունից դուրս», քանի որ մեծաքանակ տպագրությունը խնայողական չի լինի:

Պատվիրված տպագրությունը չպետք է շփոթել փոքրածավալ տպագրության հետ, որի դեպքում հաճախորդի պատվերը կատարելու նպատակով գրքերը փոքր քանակությամբ են տպագրվում և պահեստավորվում: Այդ գրքերը հատկացվում են հաճախորդներին՝ նրանցից պատվեր ստանալուն պես: Փոքրածավալ տպագրության դեպքում գրքերը պահեստավորվում են՝ թեկուզ և փոքր քանակությամբ, ինչը չի արվում պատվիրված տպագրության դեպքում:

Եթե հրատարակության պատվիրված տարբերակը իր ձևով տարբերվում է նախկինում հրատարակված ոչ պատվիրված տարբերակից (օր.՝ կոշտ կազմը փոխարինվում է թղթե կազմով), ապա անհրաժեշտ է նոր ISBN նշանակել: Սա վերաբերում է նաև ձևի այլ փոփոխություններին: Աննշան փոփոխությունները (օր.՝ չափերի հետ կապված փոփոխություններ) նոր ISBN չեն պահանջում:

Նոր ISBN պետք է նշանակվի այն պատվիրված հրատարակությանը, որի տպագրության իրավունքը գնել է մեկ այլ հրատարակիչ:

Եթե պատվիրված հրատարկության օրինակը տպագրված է որևէ մի կազմակերպության կողմից, որը հանդես չի գալիս տվյալ հրատարակչի անունից, և եթե այն տպված է ուրիշ ֆորմատով, ապա ստանում է նոր ISBN:

Գրքի անհատական պատվերով տպված տարբերակին, որտեղ հաճախորդն է թելադրում գրքի բովանդակությունը և ոչ թե հրատարակիչը, և որի քանակությունը սահմանափակ է, չի հատկացվում ISBN:

8. ISBN-ի տեղը և արտաքին ձևը հրատարակությունների վրա[5]

8.1 Ընդհանուր դրույթներ

ISBN-ը պետք է տեղադրվի հենց հրատարակության վրա:

Տպագիր հրատարակություններում՝

- տիտղոսաթերթի դարձերեսին (հեղինակային իրավունքի էջ),
- տիտղոսաթերթի ներքևի մասում, եթե դարձերեսին տեղ չկա,
- կազմի հետևի կողմի ներքևի մասում,
- շապիկի հետևի ներքևի մասում կամ կրկնաշապիկի վրա:

Էլեկտրոնային հրատարակություններում՝

- վերնագրի ցուցանակի վրա: Առաջին ցուցանակի (օր.՝ լազերային սկավառակներ, առցանց հրտարակություններ) կամ էկրանի վրա, որտեղ ցուցադրվում է վերնագիրը կամ նրա համարժեքը:

Ուսուցողական / հրահանգանգչական ֆիլմերի, տեսաֆիլմերի և այլ նմանատիպ արտադրանքների վրա ISBN-ը պետք է զետեղվի՝

- հեղինակների անվանացանկի ներքո:

Եթե հրատարակությունը լույս է տեսնում, օրինակ, որպես լազերային սկավառակ, ձայներիզ կամ խտասկավառակ, ապա ISBN-ը նշվում է հենց վերջիններիս պիտակների վրա: Եթե այդ մասում հնարավոր չէ ISBN-ը տեղադրել, ապա այն պետք է զետեղվի տուփի, շրջանակի կամ շապիկի ետևի ներքևի մասում:

Էլեկտրոնային հրատարակությունների տարբեր ֆորմատներից յուրաքանչյուրին, եթե վերջիններս հասանելի են առանձին, հատկացվում է մեկական ISBN: Եթե հրատարակությունը բաղկացած է երկու ֆորմատներից և վաճառվում է որպես փաթեթ (փաթեթի առանձին մասերի վա-

---

5

ճառքը հնարավոր չէ), ապա նրան հատկացվում է միայն մեկ ISBN: Եթե հրատարակության տարբեր ֆորմատները կիրառվում են առանձին, ապա յուրաքանչյուր տարբերակի վրա պետք է նշված լինի բոլոր ISBN-ների ցանկը: ISBN-ի վերջում, փակագծերում, պետք է նշված լինի ֆորմատի կարճ տարբերակը:

Օրինակներ՝ ISBN 978-951-45-9693-3 (կոշտ կազմ)
ISBN 978-951-45-9694-0 (թղթե կազմ)
ISBN 978-951-45-9695-7 (PDF)
ISBN 978-951-45-9696-4 (HTML)
ISBN 978-951-45-9699-5 (OEB)

ISBN-ը պետք է զետեղվի հրատարակությանը կից թողարկվող յուրաքանչյուր ուղեկից նյութի վրա:

ISBN-ը պետք է տպված լինի բավականին մեծ չափսով՝ ընթեռնելի լինելու համար (օր.՝ ինը կետաչափով կամ ավելի մեծ):

8.2 ISBN գծիկավոր ծածկագրի տեսքով

Գծիկավոր ծածկագրի արագ համաշխարհային տարածումը հանգեցրեց միջազգային EAN-ի (EAN), միատեսակ ծածկագրերի խորհրդի (UCC), ISBN միջազգային գործակալության և ISMN միջազգային գործակալության միջև համաձայնագրի ընդունմանը, որը թույլ է տալիս ISBN-ը ներկայացնելու EAN-13 գծիկավոր ծածկագրի տեսքով: Այն ISBN-ը դարձրեց համաշխարհային գծիկավոր ծածկագրի նախագծին համապատասխանող միջազգային նույնականացուցիչ:

ISBN-ը EAN-13 գծիկավոր ծածկագրի տեսքով ներկայացնելու գործընթացը պետք է համապատասխանի ISO/IEC 15420 կանոններին (գծիկավոր ծածկագրի պայմանական նշանների սահմանում EAN/UPC), որը պահանջում է EAN-13 պայմանական նշանների կիրառման համաձայնեցում EAN և UCC-ի հետ: EAN գծիկավոր ծածկագիրը բաղկացած է 13 նիշերից:

Ստորև բերված է EAN-13 գծիկավոր ծածկագրի ձևով ներկայացված

ISBN-ի օրինակ.

ISBN 978-1-873671-00-9

Գծիկավոր ծածկագրի ձևով կիրառվելու դեպքում, ISBN-ը զետեղվում է ընթեռնելի չափսերով EAN-13 գծիկավոր ծածկագրի վերևում՝ «ISBN» տառերից հետո:

Օրինակ՝

ISBN 978-1-873671-00-9



EAN-13 գծիկավոր ծածկագրի ներկայացման և կիրառման մասին հետագա տեղեկությունները կտրամադրվեն ISBN միջազգային գործակալության և ISBN խմբային գործակալությունների կողմից: Խմբային գործակալությունները կարող են անմիջականորեն համագործակցել EAN կազմակերպությունների հետ՝ ազգային կամ շրջանային մակարդակով:

EAN-13 գծիկավոր ծածկագիրը նախընտրելի է զետեղել հրատարակության հետևի մասի ներքևի աջ անկյունում՝ կռնակին մոտ:

8.3 Հավելյալ հնգանիշ ծածկագիր

Միացյալ Նահանգները և Կանադան կիրառում են հավելյալ հնգանիշ ծածկագիր գրքերի շուկայում գինը նշելու համար: Միացյալ Նահանգներում և Կանադայում գծիկավոր ծածկագրի կիրառման մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.bisg.org կայքը:

Մյուս երկրներում հավելյալ հնգանիշ ծածկագիրը չպետք է կիրառվի որպես գինը նշող միջոց, թեև այն կարող է կիրառվել «9» նախամասնիկի հետ միայն հրատարակչության ներսում: Այս հավելյալ ծածկագրերը

միշտ սկսվում են «9»-ով՝ «90000-98999»-ի համարախմբի շրջանակնե-րում:

8.4 EAN.UCC գծիկավոր ծածկագրի տրամադրումը ISBN-ի փոխա-րեն. հրահանգներ ծածկագրի պատկերը հատկացնողներին

Հրատարակիչների համար ISBN EAN գծիկավոր ծածկագրի պատկերը հատկացնողները պետք է հետևեն հետևյալ գործընթացին.

- վավերացնել հրատարակիչների կողմից տրամադրված ISBN-ը, օգտագործելով ստուգիչ թվի ճշտման ալգորիթմը՝ որևէ անճշ-տություններից խուսափելու համար (տե՛ս ISBN ստուգիչ թիվ բաժ-նում {4.5}):
- կանոնների համաձայն գծիկավորել ISBN-ը (տե՛ս համարախմբերի բաշխում բաժինը {4.6}) :
- տպել.

  Պարտադիր՝
  - ISBN-ը 9 կետաչափով կամ ավելի մեծ,
  - ISBN EAN-ը գծիկավոր ծածկագրի տեսքով,
  - ISBN EAN-ը ընթեռնելի ձևով:

  Ոչ պարտադիր (ըստ հայեցողության)՝
  - հավելյալ հնգանիշ ծածկագիրն ընթեռնելի ձևով:

Ողջ գործընթացը պետք է կատարվի համակարգչային ծրագրավորման միջոցով:

Գծիկավոր ծածկագրի տպագրումը պետք է համապատասխանի EAN-ի տեխնիկական պահանջներին:

Մեքենայաընթեռնելի ձևով տպագրված ISBN-ները դեռևս ենթակա են ISBN ստանդարտի կողմից առաջադրված կանոններին: Հավելյալ կա-նոնների և հանձնարարականների մեծ թիվը պարտավորեցնում է նրանց, ովքեր ցանկանում են տպագրել ISBN-ը թվանշագրական տա-ռաշարով, կապ հաստատել իրենց տեղային ISBN գործակալություններ-ի հետ խորհրդատվության համար:

8.5 ISBN-ի և EAN.UCC-ի գծիկավոր ծածկագրի ստեղծման ալգորիթմը

Տե՛ս *Ստուգիչ թիվ* (4.5) բաժինը ISBN-ի ստուգիչ թվի հաշվարկման մասին տեղեկության համար: Տե՛ս *Համարախմբերի բաշխումը (4.6)* բաժինը ISBN-ի բանաձևի վերաբերյալ տեղեկություն ստանալու համար:

9. ISBN համակարգի կառավարումը

9.1 Ընդհանուր դրույթներ

ISBN համակարգի կառավարումն իրականացվում է երեք մակարդակներով՝ միջազգային, ISBN գրանցող գործակալությունների և հրատարակիչների:

9.2 Միջազգային կառավարում

ISBN միջազգային գործակալության հիմնական գործառույթները և պարտականությունները հետևյալն են.

- խթանել, համակարգել և վերահսկել ISBN համակարգը,
- ներկայացնել ISBN համայնքի շահերը համապատասխան այլ կազմակերպություններում,
- կազմակերպություններին նշանակել որպես ISBN-ի գրանցող գործակալություններ և, անհրաժեշտության դեպքում, չեղյալ համարել նշանակումները,
- սահմանել գրանցախմբերը և նրանց պատասխանատվության տակ գտնվող տարածքը և բաշխել դրանք համապատասխան ISBN գործակալությունների միջև,
- սահմանել գրանցախմբի կանոնակարգը, որով էլ կորոշվի յուրաքանչյուր խմբի գրանցատարրի երկարությունը, և ապահովել այս կանոնների ճշգրիտ և ըմբռնելի իրագործումը,
- եզակի գրանցատարրերի խմբեր հատկացնել ISBN գործակալություններին և հետևել արդեն նշանակված գրանցատարրերի ամբողջական և ճշգրիտ գրանցմանը,
- ապահովել ISBN-ների և նրանց վերաբերյալ տվյալների պահպանումը՝ ISBN գործակալությունների գրանցամատյանների միջոցով,
- զարգացնել, հետևել և բարելավել ISBN գործակալությունների և

այդ գործակալությունների կողմից ISBN-ների գրանցման աշխատանքներն ու գործընթացը՝ ներառյալ գործընթացին վերաբերող վարձերը,

- հեշտացնել կրկնակի նշանակված ISBN-ների վերանայման և լուծման խնդիրները,
- վերանայել և վճռել գրանցող գործակալությունների կողմից ընդունվող որոշումներին վերբերող բողոքները,
- պատրաստել, պահպանել և հասարակայնացնել ISBN համակարգի գործածողների համար նախատեսված փաստաթղթերը,
- ISBN միջազգային գործակալությանն աջակցելու նպատակով տնօրինել դրամական մուտքերը՝ ներառյալ ISBN գործակալությունների ներդրումները:

9.3 ISBN գրանցող գործակալություններ

Գրանցախմբի շրջանակներում ISBN համակարգի կառավարումը պատկանում է ISBN գրանցող գործակալությաուններին: ISBN գրանցող գործակալությունները կարող են գործել ազգային, շրջանային, լեզվական կամ այլ ընդունելի մակարդակով՝ խմբերի բաշխման սկզբունքներին համապատասխան:

Մեկ խումբը կարող է ներառել մի քանի ազգային գործակալություններ (օր.՝ խմբային նույնականացուցիչ 978-0 և 978-1-ը ունեն առանձին գործակալություններ Ավստրալիայում, Միացյալ Թագավորությունում, Միացյալ Նահանգներում, Կանադայում և այլն):

ISBN գրանցող գործակալությունների գործառույթները և պարտավորությունները.

- ապահովել շարունակական ծառայության մատուցումը,
- տեղեկագիր թողարկել գրքին կամ հրատարակչին հատկացված ISBN-ների կամ ISBN գրանցատարրի մասին,
- ստեղծել, կարգավորել և պահպանել ISBN տվյալների գրանցա-

մատյանները և ադմինիստրատիվ տվյալները ISBN միջազգային գործակալության կողմից հաստատված կանոններին համապատասխան: (ISBN տվյալների հետ կապված խնդիրները կարող են հանձնարարվել այլ մատենագիտական կազմակերպություններին, եթե միայն տրամադրված նյութերը համապատասխանում են ISBN միջազգային գործակալության կողմից առաջադրված պահանջներին),

- շտկել սխալ նշանակված ISBN-ները և ISBN տվյալները,
- հասանելի դարձնել ISBN-ները և դրանց հետ կապված տվյալները ISBN համակարգի գործածողների և մյուս գրանցող գործակալությունների համար՝ ISBN միջազգային գործակալության պահանջներին համապատասխան,
- հավաքագրել և պահպանել վիճակագրական տվյալներ ISBN-ի հետ կապված աշխատանքների վերաբերյալ և պարբերաբար զեկուցել ISBN միջազգային գործակալությանը,
- խթանել ISBN համակարգի կիրառումը, սովորեցնելով և վարժեցնելով մյուսներին՝ ISBN ստանդարտի պահանջներին համապատասխան,
- հետևել ISBN միջազգային գործակալության կողմից սահմանված ISBN ստանդարտի ընթացակարգին:

9.4 Հրատարակչի պարտականությունները

Հրատարակիչները պատասխանատու են իրենց հրատարակած յուրաքանչյուր գրքին նշանակված հրատարակչական տարրի, ինչպես նաև համապատասխան կանոնակարգի կիրառման համար:

Նրանք կարող են դիմել ISBN գրանցող գործակալություններին և ստանալ գրանցատարր՝ տպված կամ էլեկտրոնային տարբերակով: Որոշ գործակալություններում այս ծառայությունները կարող են վճարովի լինել:

ISBN գրանցող գործակալությունը կսահմանի հրատարակչին հատկաց-

վող տարրերի համարախմբերը: Հատկացված համարախումբը կորոշ-վի ելնելով հրատարակչության արտադրողականությունից: Հրատարա-կիչը պետք է ISBN գրանցող գործակալությանը տեղեկություններ տրա-մադրի հրատարակված և հրատարակության պատրաստվող գրքերի մասին:

Հրատարակիչը պետք է ISBN գրանցող գործակալությանը (կամ տեղա-կան մատենագիտական կազմակերպությանը) ապահովի ISBN ստա-ցած գրքերի մասին տեղեկությամբ: Տվյալների տրամադրման ձևը և ֆորմատը սահմանված է ISBN միջազգային գործակալության և ISBN գրանցող գործակալությունների կողմից:

ISBN համակարգի վերաբերյալ մանրամասն տեղեկություն և հրահանգ-ներ ստանալու համար կարող եք դիմել ձեր տարածքի ISBN գրանցող գործակալությանը:

10. Համակարգում չընդգրկված հրատարակչություններ

Եթե հրատարակիչը չի ընդգրված ISBN համակարգում, ապա գործակալությունը պետք է կապ հաստատի նրա հետ և տեղեկացնի բոլոր գրքերին ISBN նշանակելու գործընթացի կարևորության մասին, ինչպես նաև մանրամասն տեղեկություն տրամադրի ստանդարտին միանալու պահանջների վերաբերյալ:

Եթե հրատարակիչը հազվադեպ է գրքեր տպագրում և նախկինում երբեք ինքնուրույն գիրք չի համարակալել, ապա գործակալությունը կարող է հատկացնել մեկ գրանցվողի նույնականացուցիչ բազմաթիվ նմանատիպ հրատարակիչներին: Այս գործընթացը պետք է խստորեն վերահսկվի՝ խուսափելու համար որևէ թյուրիմացությունից, քանի որ բացառություն է ընդհանուր օրենքից, ըստ որի յուրաքանչյուր գիրք պետք է ունենա առանձին գրանցվողի նույնականացուցիչ:

Որոշ երկրներում խմբային գործակալությունը ISBN չունեցող օրինականորեն ներմուծված գրքերին ինքն է հատկացնում ISBN: Այնուհետև նշանակված ISBN-ի մասին գործակալությունը տեղեկացնում է հրատարակչին և հրապարակում այն ազգային մատենագիտության տեղեկագրում:

11. ISBN-ի գործնական կիրառումը

ISBN-ը կիրառվում է գրահրատարակչության բոլոր ճյուղերում:

Հրատարակչատների կողմից ISBN-ը կիրառվում է.

- հրատարակությունների նախագծերը՝ հեղինակի ձեռագրից մինչև վերջնական հրատարակություն, նույնականացնելու համար,
- հրատարակությունները տեղեկատուներում և գովազդային նյութերում նույնականացնելու համար,
- տպագիր կամ էլեկտրոնային տեղեկատուներում, ինչպես նաև ինտերնետային կայքերում ներկայացնելու համար,
- ամբողջ գրքային ֆոնդի վերահսկման համար,
- հեղինակային հոնորարների վերահսկման համար,
- պատվերների համար,
- գումարների հաշվառման և գանձման համար,
- առևտրային գործընթացի վերահսկման համար,
- վիճակագրություն կազմելու և
- վերադարձված գրքերի վերահսկաման համար:

Մատենագիտական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները, տարածող կենտրոնները և մեծածախ վաճառքով զբաղվողները ISBN-ը կիրառում են.

- տպագրվող և տպագրությունից դուրս գտնվող գրքերի տվյալների համակարգչային մուտքագրման համար,
- այդ տվյալներից մատենագիտական շտեմարաններ կազմելու նպատակով՝ նախատեսված գրքերի շուկայի համար,
- էլեկտրոնային հաղորդակցման համակարգերի վրա հիմնված ծառայություններ պատվիրելու համար՝ ինչպիսիք են EDI (էլեկտրոնային տվյալների փոխանակում) կամ ինտերնետը,
- գրքային ֆոնդի վերահսկման համար,
- ներքին ծառայությունների գործընթացը վերահսկելու համար,
- գումարների հաշվառման և գանձման համար,
- վաճառքի տվյալները ստանալու համար,
- վերադարձված գրքերի տնօրինման համար,
- ցանկեր և տեղեկատուներ կազմելու համար:

Գրադարանների համար նախատեսված կենտրոնացված ծառայությունների կազմակերպությունում ISBN-ը կիրառվում է.

- հրատարակիչներին և գրքերի մեծածախ վաճառքով զբաղվողներին պատվերեներ տալու համար,
- գրադարաններից ստացվող պատվերների ընդունման համար,
- գրքային ֆոնդի վերահսկման համար,
- ներքին ծառայությունների գործընթացը վերահսկելու համար,
- գումարների հաշվառման և գանձման համար,
- կազմելու գործընթացը հսկելու համար:

Գրախանութներում ISBN –ը կիրառվում է.

- մատենագիտական որոնումների համար,
- հրատարակիչների և տարածողների հասցեների որոնման համար,
- էլեկտրոնային հաղորդակցման համակարգերի վրա հիմնված ծառայություններ պատվիրելու և վերապատվիրելու համար՝ ինչպիսիք են EDI (էլեկտրոնային տվյալների փոխանակում) կամ ինտերնետը,
- գրքային ֆոնդի վերահսկման համար,
- հաշվառման և սպառողից գումարի գանձման համար,
- էլեկտրոնային առևտրակետերի աշխատանքի համար (EPOS):

ISBN-ը գրադարաններում կիրառվում է.

- տեղեկությունների համակարգման համար,
- պատվիրման համար,
- քարտացուցակագրման համար,
- վիճակագրական տվյալներ տրամադրելու համար,
- նյութերի տրամադրման փոխատվության իրավունքի կիրառման համար,
- գրքերի միջգրադարանային փոխանակումների համար:

12. ISBN և EAN

1997 թվականին համաձայնագիր կնքվեց Միջազգային EAN-ի (EAN), միատեսակ ծածկագրերի խորհրդի (UCC), ISBN միջազգային գործակալության և ISMN միջազգային գործակալության միջև փոխադարձ համագործակցությունը խթանելու մասին: Ըստ համաձայանգրի, տվյալ կազամակերպությունների ներկայացուցիչներն ունեն միմյանց գլխավոր համաժողովների ժամանակ դիտորդի կարգավիճակ, փոխադարձ խորհրդատվության և ոչ տպագիր գրքերի համարակալումը կարգավորելու իրավունք:

Հասցեներ.

International EAN
Blue Tower
Avenue Louise 326 – Bte 10
B- 1050 Brussels
Belgium
Tel: (+32 2) 788 78 00
Fax: (+32 2) 788 78 99
E-mail: info@ean-int.org
URL: http://www.ean-int.org

Uniform Code Council, Inc
Princeton Pike Corpoate Centre
1009 Lenox Drive, Suite 202
Lawrenceville, NJ 08648
USA
Tel: (+1 609) 620 0200
Fax: (+1 609) 620 1200
URL: http://www.uc-council.org

13. ISBN և այլ նույնականացուցիչներ

13.1 DOI

Թվայնացված օբյեկտի նույնականացուցիչը (DOI) ինտերնետում հաստատուն գործող նույնականացուցիչների և մտավոր սեփականության փոխանակման համակարգ է: DOI միջազգային հաստատությունը (http://www.doi.org) ոչ շահութաբեր կազմակերպություն է և ղեկավարում է DOI համակարգի զարգացումը, աշխատանքը և արտոնագրված տրամադրումը գրանցող գործակալություններին: DOI համակարգերը կիրառվում են ցանկացած մտավոր սեփականության ամբողջություն նույնականացնելու (անվանելու) համար՝ ներառյալ ISBN-ով նույնականացվածները, և կարող են կիրառվել ISBN-ի հետ համատեղ (որպես DOI-ի կառուցվածքի բաղկացուցիչ մաս)՝ առաջարկելով բանաձևերի, տվյալների և իրագործման ձևերի հավելյալ գործառույթներ և միաժամանակ ապահովելով հաստատուն համագործակցություն: Ինտերնետում առաջին դասի օբյեկտները նույնականացնելու համար DOI համակարգը համապատասխանում է երկու ամբողջական մոտեցումների գործնական պահանջներին՝ ռեսուրսի միասնականացած անուն (URN) և ռեսուրսի միասնականացած նույնականացուցիչ (URI):

DOI կառուցվածքը (ANSI/NISO Z39.84-2000, «Թվայնացված օբյեկտների նույնականացուցիչների շարադասությունը») ունի երկու բաղադրիչներ՝ նախածանց և վերջածանց, որոնք էլ միասին կազմում են DOI: Նախածանցը հատկացվում է գրանցվողին DOI գրանցող գործակալության կողմից: Մեկ գրանցվողի կարող է հատկացվել տարատիպ նախածանցներ: Յուրաքանչյուր նույնականացվող նյութի պետք է նշանակվի եզակի վերջածանց: Նախածանցի և վերջածանցի զուգակցումը երաշխավորում է նյութի եզակիությունը DOI համակարգում: DOI երկարությունը սահմանափակված չէ:

Գոյություն ունեցող ստանդարտ նույնականացուցիչ համարի համակարգը, ինչպիսին ISBN-ն է, կարող է միաձուլվել DOI համակարգի հետ՝ որպես DOI վերջածանց: Այս միաձուլման ձևաչափը համաձայնեցվում է գրանցող գործակալության կամ նման ծառայություններ առաջարկող գործակալությունների հետ. ISBN-ը կողմնակից է նույն նյութի հատկորոշմանը երկու համակարգերի կողմից և ISBN-ի նշմանը գրելաձևի միջոցով: Այդ դեպքում DOI-ին կստանա հետևյալ ձևը.

օրինակ՝

10.nnnn/[ISBN]9780110002224
կամ
10.nnnn/9780110002224,

որտեղ «10» DOI-ին նշանակված համարն է, «nnnn» գրանցվողի համարն է, իսկ շեղ գծին հաջորդող թվերի շարքը ISBN-ը հատկանշող վերջածանցն է:

DOI գրանցող հաստատության ղեկավարության հասցեն՝

DOI միջազգային հաստատություն
Jordan Hill
Oxford OX2 8DP
UK
Tel: (+44)(0) 1865 314033
Fax: (+44)(0) 1865 314475
E-mail: n.paskin@doi.org
URL: http://www.doi.org

13.2 GTIN

GTIN-ը (առևտրային առարկայի համաշխարհային համար) ընդհանուր տերմին է բոլոր EAN.UCC արտադրանքների նույնականացուցիչների համար, ներառյալ EAN-13: Այս նույնականացուցիչներից յուրաքանչյուրը կարող է ներկայանալ 14 նիշ ունեցող համարով: Անհրաժեշտության դեպքում ավելացվում են թվին նախորդող զրոներ: Ցանկալի է, որ տվյալները պահվեն հենց այս ձևով: 14 նիշ ունեցող համարները, որտեղ առաջին թիվը զրո չէ, հատկացվում են փաթեթներին, որոնք նախատեսված չեն մանրածախ վաճառքի համար (օր.՝ փաթեթավորման արկղ, տուփ): Գրքերի մատակարար կազմակերպությունները կարող են, համաձայնության գալով գործընկերների հետ, կիրառել զրոյով չսկսվող համարներ փաթեթի չափսը ցույց տալու համար (օր.՝ գրքի 20 օրինակ):

Գիրք նույնականացնող 14 նիշ ունեցող GTIN-ը միշտ պետք է սկսվի

զրոյով, իսկ մնացյալ 13 նիշերը ցույց կտան EAN-13-ի համարը: (GTIN-ը երբեք չի կարող ցուցադրվել գրքերի վրա գծիկավոր ծածկագրի ձևով):

13.3. Ինտերներտային նույնականացուցիչներ. URN

Ռեսուրսի միասնականացած անունները (URN) տեղեկատվության մշտական աղբյուր հանդիսացող նույնականացուցիչներ են: Նրանց կառուցվածքը, որոշված RFC 2141 ինտերնետային ստանդարտի կողմից, պարզ է.

<URN> ::= “urn:” <NID> “:” <NSS>,

որտեղ <NID>-ը անվանման նույնականացուցիչն է, իսկ <NSS>-ը անվանման որոշակի շարք:

URN անվանման գրանցման գործընթացը որոշված է RFC 3406-ի կողմից: Գոյություն ունեցող ցանկացած նույնականացնող համակարգ կարող է գրանցվել որպես անվանման նույնականացուցիչ, եթե այն համապատասխանում է URN-ի կառուցվածքին: RFC 3187 կողմից ISBN համակարգի համար որոշվել է NID “isbn”-ը: Համաձայն այս RFC ստանդարտի, ISBN-ի վրա հիմնված ցանկացած URN-ն ունի հետևյալ կառուցվածքը.

urn:isbn:<NSS>,

որտեղ անվանման որոշակի շարքը (<NSS>) պարունակում է ISBN-ի մեքենայաընթեռնելի ձևը: Օրինակ՝

urn:isbn:9780110002224
urn:isbn:9510184357

Տասանիշ և տասներեքանիշ ISBN-ները կարող են ունենալ նույն URN-ը: ISBN-ների վերածումը URN-ների տեխնիկապես հեշտ գործընթաց է և գումար չի պահանջում. URN-ները անվճար են: Լուծաչափության սպասարկումը, URN-ները նույնականացնող աղբյուրներին կապող համա-

կարգերը կամ այս աղբյուրները նկարագրող մատենագիտական գրառումները կարող են հիմնվել ինտերնետային ներկա կամ ապագա տեխնոլոգիաների վրա, քանի որ URN-երը կախված չեն տեխնոլոգիայից: Ի սկզբանե URN-ների լուծաչափն ինտերնետում կախված է տիրույթի անվան համակարգից (Domain Name System)՝ որոշված RFCs 3401-3405-ի կողմից: Յուրաքանչյուր անուն ունի իր սեփական տարածման մեխանիզմը, որը որոշվում է RFC-ի կողմից, և որտեղ անունը գրանցվում է նույնականացման համակարգում: URN-ի գրելաձևը թույլ է տալիս այն օգտագործել URL-ների փոխարեն:

Տեղեկությունների համար կարող եք օգտվել հետևյալ կայքերից.

NID-ի նշանակումների համար՝ http://www.iana.org/assignments/urn-namespaces

URN-ի համար՝ http://www.uri.net

13.4 ISAN և V-ISAN

ISAN (միջազգային ստանդարտ տեսալսողական արտադրանքների համար)

ISAN-ը նույնականացնում է տեսալսողական արտադրանքները՝ շարժական պատկերից բաղկացած ցանկացած աշխատանք, ձայնային ուղեկցությամբ կամ առանց և անկախ նրա ֆիզիկական ձևից: ISAN-ը նախատեսված չէ անշարժ պատկերների, ձայնագրությունների կամ այլ գործերի համար, որտեղ չկա զգալի տեսալսողական բաղադրիչ: ISAN-ի նշանակումն իր մեջ չի ներառում հեղինակային իրավունքի գրանցման որևէ գործընթաց և ոչ էլ ապահովում է տեսալսողական աշխատանքի հեղինակային իրավունքը: ISAN-ը մատչելի է բոլոր իրավասուների համար (հեղինակի, պրոդյուսերի և նրանց գործակալների)՝ նույնականացնելու տեսալսողական աշխատանքը, անկախ նրա ֆիզիկական ձևից:
ISAN-ը բաղկացած է 16 նիշերից և բաժանված է երկու մասերի՝ 12 նիշանոց բուն մասը, որին հաջորդում է 4 նիշանոց մասը դրվագների համար: Եթե աշխատանքը դրվագ չէ, ապա օգտագործվող զրոներն ունեն

լրացնող բնույթ: ISAN նախածանցը և վերջնական ստուգիչ թիվը ISAN-ի անբաժան տարրերն են:

Օրինակ.՝ ISAN 1881 66C7 3420 6541 9

ISAN-ը միջազգային ստանդարտ է (ISO 15706:2002):

ISAN ղեկավար մարմին,
ISAN միգազգայն գործակալություն,
26, rue de Saint Jean
CH-1203, Geneva
Switzerland
Tel.:(+41) 22 545 10 00
Fax: (+41) 22 545 10 40
E-mail: info@isan.org
URL: http://www.isan.org

V-ISAN - միջազգային ստանդարտ տեսալսողական արտադրանքների համար (ISAN) - տարբերակի նույնականացուցիչ

V-ISAN-ը նույնականացնում է տեսալսողական ստեղծագործության հատուկ տարբերակը: V-ISAN-ը միջազգային ստանդարտ տեսալսողական արտադրանքների համարի (ISAN)՝ սահմանված ISO 15706-ում, և ավելացված տարբերակի միացությունն է:

V-ISAN-ը նախատեսված է տեսալսողական ստեղծագործության հատուկ տարբերակը ճշգրիտ և եզակիորեն նույնականացնելու համար, ինչպես օրինակ տեսալսողական արտադրության մեջ և տարածող համակարգերում, հեռարձակող ծրագրերի հավելվածներում և էլեկտրոնային ծրագրի ուղեցույցներում:

V-ISAN-ը բաղկացած է տեսալսողական աշխատանքների համար նախատեսված ISAN-ի 16 նիշերից և հաջորդող հատուկ տարբերակի հատվածամասի 8 նիշերից: Արտադրանքի վրա պետք է զետեղված լինեն ISAN տառերը, ինչպես նաև ISAN-ի և տարբերակի հատվածամասի ստուգիչ թվերը:

Օրինակ՝ ISAN 1881-66C7-3420-6541-9-9F3A-0245-U

V-ISAN-ի նշանակումը չի ներառում հեղինակային իրավունքի տրամադրում:

2005 թվականի հունվարին V-ISAN-ը գտնվում էր ստանդարտացման գործընթացի մեջ ISO TC46/SC9 առաջին աշխատանքային խմբի կողմից: ISO-ի հաստատումից հետո, ստանդարտը կիրապարակվի որպես ISO 15706-2: Այն կուղեկցվի 20925 տեխնիկական զեկույցով՝ կազմված V-ISAN-ի կիրառման վերաբերյալ տեղեկատվական ուղեցույցից «Տեղեկատվություն և փաստաբանություն – միջազգային ստանդարտ տեսալսողական արտադրանքի համար (ISAN) – տարբերակի հատվածամասի (V-ISAN) կիրառման ուղեցույց» վերնագրով:

ISO աշխատանքային խմբի տվյալները՝

ISO/TC 46/SC 9 Secretariat
E-mail: iso.tc46.sc9@lac-bac.gc.ca
URL: http://www.lac-bac.gc.ca/iso/tc46sc9/wg1/register.htm

13.5 ISMN

ISMN-ը (երաժշտական (նոտագրական) հրատարակությունների միջազգային ստանդարտ համար) նույնականացնում է բոլոր երաժշտական (նոտագրական) հրատարակությունները՝ նախատեսված վաճառքի, վարձույթի կամ նվիրատվության համար:

Այն տասանիշ նույնականացուցիչ է, որտեղ թվերին նախորդող «M» տառը տարբերակում է ISMN-ը ISBN-ից և այլ ստանդարտներից:

Մյուս տարրերն են՝ հրատարակչի նույնականացուցիչը, որը նույնականացնում է որոշակի երաժշտական հրատարակչություն, վերնագրի համարը, որը նույնականցնում է որոշակի երաժշտական գիրք և ստուգիչ թիվը, որը հաշվարկվում է համաձայն մոդուլ 10-ի: «M» տառը հաշվարկվում է որպես 3:

ISMN-ը կարող է ընդգրկվել միջազգային տասներեքանիշ գծիկավոր ծածկագրում՝ օգտագործելով EAN 979 նախածանցը: Միայն գծիկավոր ծածկագրի ձևով հանդես գալու դեպքում «M» տառը փոխարինվում է իրեն համարժեք «0»-ով:

ISMN չի կիրառվում երաժշտության մասին տպագրվող գրքերի, ձայնեռիզների, լազերային սկավառակների և տեսաֆիլմերի համար:

ISMN ստացած հրատարակությունները ներառում են նոտագրումներ (նվագախմբային և վոկալ), ծաղկաքաղեր, միկրոձևեր, Բրայլ և էլեկտրոնային երաժշտական հրատարակություններ և երգերի ժողովածուներ: Որոշ դեպքերում երգերի, հիմների ժողովածուները կամ ընդարձակ տեքստով և պատկերներով ալբոմները կարող են համարվել երաժշտական (նոտագրական) հրատարակություն կամ «սովորական» գիրք, կամ երկուսն էլ միասին: Այս դեպքերում կարող է նշանակվել և՛ ISBN, և՛ ISMN:

ISMN-ը ղեկավարվում է ISMN միջազգային գործակալության կողմից:

ISMN միջազգային գործակալություն
Staatsbibliothek zu Berlin
Preussischer Kulturbesitz
Potsdamer Strasse 33
10785 Berlin, Germany
Tel.: (+49 30) 266-2336,-2496, -2498
Fax: (+49 30) 266-2378
E-mail: ismn@sbb.spk-berlin.de
URL: http://www.ismn-international.org

13.6 ISRC

Ձայնագրության միջազգային ստանդարտ ծածկագիրը (ISRC) ձայնագրությունների միջազգային ստանդարտ նույնականացուցիչ է (ISO 3901): Այն համարակալում է ստեղծագործության յուրաքանչյուր ձայնագրություն (և ոչ թե ֆիզիկական նմուշը)՝ անկախ կոնտեքստից և թողարկման ձևից: ISRC-ին բաղկացած է 12 նիշերից և ներառում է 4 տարր. երկրի ծածկագիրը, առաջին սեփականատիրոջ ծածկագիրը, տարին և ձայնագրության ծածկագիրը:

Օրինակ՝ ISRC DE P55 97 00001

ISRC համակարգը ղեկավարվում է IFPI-ի (Ձայնագրվածքի արդյունա-

բերության միջազգային ֆեդերացիա) կողմից.

ISRC միջազգային գործակալություն
IFPI Secretariat
54 Regent Street
London W 1 B 5Re
United Kingdom
Tel: +44 (0) 20 7878 7900
Fax +44 (0) 20 7878 6832
E-mail: isrc@ifpi.org
URL: http://www.ifpi.org/isrc

13.7 ISSN

Ի լրումն գրքի միջազգային ստանդարտ համարի համակարգի՝ հիմնվեց շարունակական աղբյուրների համարակալման համակարգ՝ պարբերականի միջազգային ստանդարտ համար (ISSN), ISO 3297:1998:

Շարունակական աղբյուրը պարբերաբար թողարկվող հրատարակություն է՝ առանց կանխորոշված ավարտի: Այդպիսի հրատարակությունները թողարկվում են պարբերաբար՝ համարակալված կամ հաջորդական կարգով: Դիցուկ օրինակներ են թերթերը, պարբերականները, ամսագրերը և այլ նմանատիպ աղբյուրներ, որոնք պարբերաբար թարմացվում են:

ISSN-ը ղեկավարվում է պարբերականների գրանցման միջազգային կենտրոնի կողմից.

ISSN միջազգային կենտրոն
20, rue Bachaumont
75002 Paris, France
Tel: (+33 1) 44 88 22 20
Fax: (+33 1) 40 26 32 43
E-mail: issnic@issn.org
URL: http://www.issn.org

Պարբերականների համար ISSN ձեռք բերելու նպատակով հրատարա-

կիչները կարող են դիմել ISSN միջազգային կենտրոն կամ իրենց ազգային ISSN կենտրոն:

Որոշ հրատարակություններ, ինչպիսիք են տարեգրքերը, մենագրական շարքերը և այլն, պետք է ստանան ISSN ամբողջ շարքի վերնագրի համար (որը կպահպանվի շարքի բոլոր մասերի և առանձին հատորների համար) և ISBN յուրաքանչյուր առանձին հատորի համար:

Հրատարակությանը հատկացված ISBN-ը և ISSN-ը պետք է հստակ նույնականացված լինեն:

13.8 ISTC

ISTC-ն (տեքստի միջազգային ստանդարտ ծածկագիր) տեքստային աշխատանքների արդյունավետ նույնականցման կամավոր համարակալման համակարգ է: Ստանդարտը մշակվում է ISO-ի (ստանդարտացման միջազգային կազմակերպություն) հովանավորության ներքո:

ISTC կարող է կիրառվել ցանկացած տեքստային աշխատանքի համար, որը նախատեսված է թողարկել մեկ կամ ավելի ձևերով: Համաձայն ստանդարտի՝ «տեքստային աշխատանք»-ը սահմանվում է որպես մտավոր կամ գեղարվեստական բովանդակությամբ առանձին, վերացական ստեղծագործություն: Տեքստային աշխատանքների օրինակներից են հոդվածը, էսսեն, նովելը, պիեսները, վիպակները և այլն:

ISTC չի նշանակվում ստեղծագործության ֆիզիկական արտարդրանքին ինչպիսիք են տպագրված գիրքը, զրուցարանը կամ նման արտադրանքների էլեկտրոնային տարբերակները: Վերջիններին պետք է նշանակել ISBN:

ISTC-ն ապահովում է տեքստային աշխատանքների, բայց ոչ հրատարակությունների, արդյունավետ նույնականացումը և վերահսկումը, չնայած որ այն կարող է կապված լինել արտադրանքի նույնականացուցիչների հետ, ինչպիսին է ISBN-ը, տեքստային աշխատանքների տարբեր դրսևորումները զետեղելու համար:

ISTC-ն «համր» նույնականացուցիչ է, քանի որ այն չի ներառում որևէ

ծածկագիր կամ այլ նշանակալից տարրեր և չի նշում աշխատանքի հեղինակին կամ սեփականատիրոջը:

ISTC-ն 16 նիշանոց համար է՝ ներառող 0-9-ը թվերը և A-F տառերը և բաղկացած է 4 տարրերից՝ գրանցված գործակալության, տարվա, ստեղծագործության և ստուգիչ թվի տարրերից:

CISAC, Nielsen BookData և R.R. Bowker-ն ընտրվել են ստանձնելու ISTC-ի ապագա ղեկավարությունը, ISO 21047 հրատարակության հաստատումից անմիջապես հետո:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով.

CISAC
20-26 Boulevard du Parc
92200 Neuilly sur Seine
France
Tel: (+33 1) 55 62 08 50
Fax: (+33 1) 55 62 08 60
E-mail: cisac@cisac.org
URL: http://www.cisac.org

13.9 ISWC

ISWC-ն նույնականացնում է երաժշտական գործերը որպես վերացական ստեղծագործություններ: Այն չի կիրառվում նույնականացնելու երաժշտական ստեղծագործությունների ֆիզիկական դրսևորումները: Այդպիսի դրսևորումները հանդիսանում են ISRC-ի, ISMN-ի, ISAN-ի և ISTC-ի նույնականացման համակարգերի առարկա:

Օրինակ՝ ISWC-ն կարող է նույնականացնել Մոցարտի «Կախարդական սրինգ» ստեղծագործությունը: Տպագրված նոտագրումներից յուրաքանչյուրին կհատկացվի ISMN, լիբրետոներին և նրանց թարգմանություններին կհատկացվեն ISTC-ներ (և ISBN-ներ նրանց հրատարակությունների համար), ներկայացման տեսաժապավենային տարբերակը կստանա ISAN, հեռուստատեսային ծրագրերի շարքը՝ V-ISAN, իսկ օպերային ձայնագրությունը՝ ISRC:

CISAC
20-26 Boulevard du Parc
92200 Neuilly sur Seine
France
Tel: (+33 1) 55 62 08 50
Fax: (+33 1) 55 62 08 60
E-mail: cisac@cisac.org
URL: http://www.cisac.org

14. ONIX

ONIX-ը էլեկտրոնային ձևով գրքերի արդյունաբերության, պարբերականների և էլեկտրոնային արտադրանքի ներկայացման և հաղորդակցման միջազգային ստանդարտ է: Այն ունի բնութագրիչ պարունակություն (տվյալներ, հայտանիշեր, ծածկագրերի ցանկեր) և XML DTD:

ONIX-ը մշակվել և հաստատվել է EDItEUR-ի կողմից՝ գրքերի արդյունաբերության հաղորդակցման, գրքերի արդյունաբերության հետազոտական խմբերի և ONIX ընդունած երկրների գրքերի շուկայի և գրքերի տպագրության ծառայությունների հետ համատեղ: Այդ երկրներն են ԱՄՆ-ն, Միացյալ Թագավորությունը, Ֆրանսիան, Գերմանիան, Ավստրալիան, Կանադան և Կորեայի Հանրապետությունը:

ONIX-ը կազմվել է համաձայն MARC 21-ի՝ Կոնգրեսի գրադարանի կողմից և համաձայն UNIMARC-ի՝ Բրիտանիայի գրադարանի կողմից: Այն կիրառվում է որոշ ազգային գրադարանների կողմից հրատարակիչներից տեղեկություններ ստանալու և հրատարակությունների մասին տեղեկագրեր (CIP) կազմելու կամ Առցանց հասարակական տեղեկագրում (OPACs) ավելացումներ կատարելու նպատակով:

EDItEUR
39-41 North Road
London N7 9DP
UK
Tel.: +44 (0) 20 76 07 0021
Fax: +44 (0) 20 76 07 0415
E-mail: brian@bic.org.uk
URL: http://www.editeur.org/

15. Հրատարակություններ

ISBN միջազգային ուղեցույց հրատարակիչների համար (PIID)

ISBN միջազգային ուղեցույցը (PIID) ներառում է հրատարակիչներին հատկացված բոլոր նույնականացուցիչները: Այն միաժամանակ հրատարակվում է տպագրված և CD-ROM տարբերակներով:

ISBN տեղեկատվական ամսագիր

ISBN տեղեկատվական ամսագիրը սովորաբար ներկայացնում է ISBN միջազգային գործակալության հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

ISBN համակարգի վերաբերյալ առավել հաճախակի տրվող հարցեր

Ինչու՞ պետք է օգտագործեմ ISBN:

Եթե Դուք հրատարակիչ եք կամ գրավաճառ, ապա ISBN-ի կիրառումը բխում է Ձեր իսկ շահերից: Ձեր գրքերը չեն վաճառվի, եթե հնարավոր չլինի նրանց պատվիրումը և տարածումը ISBN-ի միջոցով, և եթե նրանք չեն ներգրավված մատենագիտական տեղեկագրում: Մարդիկ անտեղյակ կլինեն Ձեր գրքերի գոյության մասին, իսկ եթե նույնիսկ տեղեկացված լինեն, ապա կհամարեն, որ գրքարտադրության համակարգից դուրս բավական դժվար կլինի դրանցից օգտվելը:

Ես հարկադրվա՞ծ եմ ձեռք բերելու ISBN:

ISBN միջազգային համակարգի տեսանկյունից ISBN-ի ձեռք բերման օրենսդրական պահանջ չկա, և այն չի ապահովում օրենքի կամ հեղինակային իրավունքի պաշտպանությունը, թեև որոշ երկրներում ISBN-ը սահմանված է օրենքով:

Այն գրքերը, որոնք նախատեսված չեն վաճառքի համար, ISBN-ի կարիք ունե՞ն:

Ցանկալի է, որ բոլոր գրքերը նույնականացված լինեն ISBN-ներով:

Աճուրդային կամ ցուցահանդեսային տեղեկատուներին ISBN նշանակվու՞մ է:

Եթե տեղեկատուն նախատեսված է աճուրդում ներկայացվող իրերի մասին տեղեկություններ տրամադրելու համար, ապա ոչ: Տեղեկատուն հանդիսանում է առևտրային նյութ (եթե նույնիսկ նշված չէ արժեքը) և այն դուրս է ISBN-ի շրջանակներից: Իսկ եթե տեղեկատուն ցուցադրությանը ուղեկցող նյութ է և ապահովում է տեքստային տեղեկատվություն որոշակի արվեստագետի կամ թեմաների մասին, ապա այս դեպքում ISBN-ը կիրառելի է:

Ո՞վ է նշանակում ISBN նույնականացուցիչները:

Միայն ISBN միջազգային գործակալության կողմից նշանակված գրանցող գործակալությունը կարող է ISBN նույնականացուցիչներ հատկացնել առանձին հրատարակիչներին: Արդեն հատկացված նույնականացուցիչները չեն կարող վաճառվել կամ տրվել ուրիշ հրատարակչի:

Արդյո՞ք հարկավոր է նոր ISBN նշանակել, եթե փոխվում է գրքի արժեքը:

Ոչ:

Ֆորմատի փոփոխությունները պահանջո՞ւմ են նոր ISBN-ի նշանակում:

Այո, տարբեր ֆորմատները պետք է ունենան տարբեր ISBN-ներ:

Ես հրատարակում եմ գիրք օտար լեզվով: Արդյո՞ք պետք է գրքին նշանակել այն երկրի ISBN-ը, որի լեզվով գիրքը գրված է:

Ոչ:

Արդյո՞ք նոր ISBN է նշանակվում վերահրատարակվող գրքին:

Եթե տեքստի մեջ կան զգալի փոփոխություններ, ապա այո: Գրքի տիտղոսաթերթի դարձերեսին պետք է նշվի, որ այն վերահրատարակություն է, և նույն էջում տպվի նոր ISBN-ը:

Առանց փոփոխությունների վերատպված գիրքը պահանջո՞ւմ է նոր ISBN:

Ոչ:

Թույլատրելի՞ է արդյոք նոր ISBN-ի նշանակումը շուկայական նպատակների համար:

Ոչ: Եթե չկա ֆորմատի, տեքստի կամ կազմի փոփոխություն, ապա նոր ISBN չի նշանակվում:

Արդյո՞ք վերատպված գիրքը, որի արժեքը փոխվել է, պահանջում է նոր ISBN:

Ոչ: Գրքի արժեքի փոփոխությունները չեն պահանջում նոր ISBN:

Պատրաստվում եմ հրատարակել գիրք մեկ այլ հրատարակչի հետ: Ու՞մ ISBN-ը պետք է տեղադրվի գրքի վրա:

Միացյալ հրատարկության դեպքում երկու հրատարակիչներն էլ կարող են ստանալ ISBN: Միայն պետք է հստակեցնել, թե որ ISBN-ը որ հրատարչի նույնականացուցիչն է: Սակայն գծիկավոր ծածկագրի համար կիրառվում է ISBN-ներից միայն մեկը, և նախընտրելի է այն հրատարակչինը, ով պատասխանատու է գրքի տարածման համար:

Հնարավո՞ր է, արդյոք, տպագրությունից դուս եկած գրքերին նշանակված ISBN-ները վերանշանակել:

Ոչ: ISBN-ը նույնականացնում է տվյալ վերնագիրը, թողարկումը և կազմը բոլոր ժամանակների համար: Եթե գիրքը տպագրությունից դուրս է, այն դեռևս կարող է առկա լինել որոշ խանութներում և գրադարաններում:

Ինչպե՞ս են նշանակվում ISBN-ները բազմահատոր / բազմաֆորմատ աշխատություններին:

ISBN պետք է հատկացվի մի քանի հատորներից բաղկացած աշխատության ամբողջական հավաքածուին: Եթե հավաքածուի հատորները հասանելի են որպես առանձին գրքեր, ապա նրանցից յուրաքնչյուրին հատկացվում է առանձին ISBN: Նունիսկ եթե հավաքածուի հատորներն առանձին հասանելի չեն, ապա այդ դեպքում ևս նախընտրելի է հավաքածուի յուրաքանչյուր հատորին առանձին ISBN հատկացնել: Սա ավելի կհեշտացնի վերադարձված գրքերի (վնասված հատորների)

վերահսկումը: Յուրաքանչյուր հատոր պետք է ունենա ISBN-ների ցանկը:

Նման կանոններ գործում են նաև լրակազմի համար (օր.՝ CD-ROM-ը բուկլետի հետ միասին): Առանձին ISBN պետք է նշանակվի յուրաքանչյուր առանձին հասանելի մասին և մեկ առանձին ISBN՝ մասերից կազմված ամբողջությանը:

Պատրաստվում եմ տպագրել հրատարակությունների շարք: Արդյո՞ք ISBN, թե ISSN պետք է նշանակվի:

Շարքին պետք հատկացնել ISSN, իսկ առանձին հրատարակություններին՝ ISBN:

Նոր վերնագրով վերատպվող գիրքը պահանջու՞մ է նոր ISBN:

Այո, նոր վերնագիրը պահանջում է նոր ISBN:

Ես պատրաստվում եմ ղեկավարել մի ընկերություն, որն արդեն ունի իրեն հատկացված ISBN գրանցվողի նույնականացուցիչ: Հետագա բոլոր գրքերը հրատարակվելու են իմ ընկերության անվան տակ: Կարո՞ղ եմ վերահամարակալել ընկերության մյուս բոլոր գրքերը:

Եթե հրատարակությունները վերատպվում են Ձեր ընկերության կողմից՝ կրելով, հետևաբար, Ձեր ընկերության անունը, ապա Դուք կարող եք նշանակել նոր ISBN-ներ Ձեզ պատկանող նույնականացուցիչ համարախմբից:

Ի՞նչ տեղեկատվություն է ներառում <հրատարակիչ> տվյալների տարրը:

Հրատարակիչները պարտավոր են տեղեկացնել իրենց խմբի գործակալություններին կամ հրատարակությունների գրանցումը պահպանող կազմակերպություններին առաջիկայում հրատարկվող գրքերին հատկացվող ISBN-ների մասին: <Հրատարակիչ> տվյալների տարրը վերաբերում է գրքի հրատարակման հետ կապված կազմակերպության ան-

վանը: Այն պարտադիր տարր է <հրատարակիչ> բաղադրյալի համար և չի կրկնվում: Դաշտի երկարությունը հաստատուն չէ, բայց առաջարկվող երկարությունն առավելագույնս 100 նիշ է: Թեև տարրը պահանջում է տվյալներում ներառել միայն հրատարկչի անունը, սակայն գործակալությունները պետք է մշտապես պահպանեն և թարմացնեն հրատարկչի հասցեն և այլ տվյալները իրենց գրառումներում:

Ի՞նչ տեղեկատվություն պետք է ներառի <հրատարակության ամսաթիվ> տվյալների տարրը:

Այս տարրը ներառում է հրատարակվող երկրում գրքի առաջին հրատարակության ամսաթիվը: Թեև ամսաթիվը պետք է հնարավորինս ստույգ նշել, սակայն նախօրոք տեղեկացման համար բավարար է նշել ամիսը և տարեթիվը, իսկ արդեն տպագրված գրքերի համար՝ միայն տարեթիվը: Այն պարտադիր տարր է և ընդունվում է միայն հետևյալ ֆորմատով.
4 նիշ (տարեթիվ)
6 նիշ (տարեթիվ, ամիս)
8 նիշ (տարեթիվ, ամիս, օր)

Եթե հրատարաման օրը տեղեկացվում է նախօրոք, ապա այն մոտավոր է և պետք է հետագայում հաստատվի կամ փոխվի:

Կարո՞ղ եմ ձեռք բերել ISBN, եթե հրատարակիչ չեմ:

Այո: Համաձայն մեր կանոնադրության, հրատարակիչ է համարվում այն անձը, խումբը, կազմակերպությունը կամ ընկերությունը, որը պատասխանատու է իր կողմից լույս ընծայած գրքի համար: Հրատարակության ֆինանսական խնդիրները ստանձնում են ֆիզիկական և իրավաբանական անձինք և ոչ տպագրիչը:

Հիշե՛ք, որ մի շարք երկրներում հրատարակչական ոլորտը սահմանվում է օրենսդրությամբ:
Մեր երկրում գրքի շուկան գործում է հիմնականում առանց համակարգչի: Այս դեպքում ISBN-ի կարիք կա՞:

ISBN-ը կիրառելու համար համակարգչի առկայությունը պարտադիր չէ: Եթե Դուք ուզում եք արտահանել Ձեր գիրքը, ապա առանց ISBN-ի այն

չի կարող ընդգրկվել մատենագիտական ժողովածուներում:

Ես զբաղվում եմ գրքերի, գրենական պիտույքների, խաղալիքների և այլ իրերի վաճառքով: Եթե ISBN-ը նույնականացնում է միայն գրքերը, ապա ի՞նչ նույնականացուցիչներ են հարկավոր մյուս արտադրանքների համար:

Մյուս արտադրանքները կարող են համարակալվել այլ համարակալող համակարգերի կողմից՝ ինչպիսին EAN-ներն են: Ժամանակակից թվանշագրող սարքերը կարող են կարդալ տարբեր տիպերի գծիկավոր ծածկագրի համարներ:

EAN կազմակերպությունը առաջարկել է դառնալ իրենց անդամ: Արդյո՞ք դա պարտադիր է:

Եթե Դուք միայն ցանկանում եք կիրառել ISBN-ը EAN-13 գծիկավոր ծածկագրի տեսքով, ապա Ձեր անդամ լինելը պարտադիր չէ: Սակայն EAN-ը և UCC-ն տրամադրում է այլ համարակալման ստանդարտներ՝ նույնականացնելու փաթեթավորման արկղերը, փոխադրման միջոցները, էլեկտրոնային հասցեների համարները, EDI ֆորմատները (էլեկտրոնային տվյալների փոխանակում) և այլն: Այդ դեպքում անդամ դառնալը պարտադիր է: Այդ ծառայությունների մասին տեղեկությունները ճշտեք Ձեր երկրում գործող EAN կազմակերպությունից:

Ի՞նչ անել, եթե սպառվել են հատկացված նույնականացուցիչ խմբի բոլոր համարները:

Կնշանակվեն լրացուցիչ նույնականացուցիչներ: Սրանք հավելյալ, և ոչ թե փոխարինող նույնականացուցիչներ են:
Արդյո՞ք էլեկտրոնային հրատարակությունների տարբեր ֆորմատները պահանջում են առանձին ISBN-ներ:

էլեկտրոնային հրատարակությունների տարբեր ֆորմատները դիտարկվում են որպես արտադրանքի տարբեր ձևեր և, հետևաբար, պետք է նույնականացվեն տարբեր ISBN-ներով, եթե ֆորմատներից

յուրաքանչյուրն առանձին-առանձին մատչելի է:

Պատվիրված հրատարակություններին նշանակվո՞ւմ է ISBN:

Այո: Եթե պատվիրված հրատարակությունը փոխարինում է բնօրինակը և ունի նույն ֆորմատը, ապա կարելի է օգտագործել ի սկզբանե նշանակված ISBN-ը: Եթե զգալի փոփոխություններ են արվել ֆորմատի և բովանդակության մեջ, ապա պետք է նշանակել նոր ISBN:

Արդյո՞ք պատվիրված և պատվիրատուի ուզած ձևով ձևափոխված հրատարակություններին նշանակվում է ISBN:

Ոչ: Եթե հրատարակության հասանելիությունը սահմանափակ է (օրինակ՝ պատվիրատուի պահանջներին համապատասխանեցված բովանդակությամբ հրատարակություն), ապա ոչ:

Արդյո՞ք ISBN միջազգային գործակալությունն է որոշում ISBN-ների գինը: Արդյո՞ք ISBN-ների գինը ամենուր նույնն է:

ISBN միջազգային գործակալությունը չի որոշում ISBN-ների համար գանձվող գումարը, որովհետև այդ խնդիրը լուծվում է ազգային / խմբային գործակալությունների մակարդակով: Եվ քանի որ այս խնդրի պատասխանատվությունը ստանձնում են ազգային / խմբային գործակալությունները, ապա հաշվի առնելով տարբեր տնտեսական գործոններ՝ յուրաքանչյուր գործակալություն կարող է սահմանել տարբեր արժեքներ:

Ի՞նչ պետք է անել, եթե ինձ պետք է միայն մեկ ISBN:

Որոշ երկրներում ISBN-ները մատչելի են որպես մեկ առանձին համար (հեղինակ հրատարակիչների համար): Այլ երկրներում ISBN-ները հատ-

կացվում են միայն համարախմբերով, և նվազագույն համարախումբը տասն է: Հետևաբար, այս խնդրի լուծման համար պետք է դիմել ազգային / խմբային գործակալություններին:

Իմ երկրում չկա ISBN գործակալություն: Ի՞նչ պետք է անել:

ISBN-ը ձևավորված համակարգ է, որը գործում է ավելի քան 160 երկրներում: Մենք խորհուրդ կտայինք դիմել մշակույթի նախարարությանը կամ որևէ այլ ասոցիացիայի, որը պատասխանատու է կամ ազդեցություն ունի գրքերի շուկայի վրա՝ տեղյակ պահելու համար ISBN համակարգը Ձեր երկրում կիրառելու Ձեր ցանկության մասին:
Եթե պետք է անհապաղ նշանակել ISBN հրատարակությանը, ապա կարող եք կապ հաստատել այլ երկրի մատակարար կազմակերպության հետ, որը կցանկանա պատասխանատվություն կրել Ձեր գրքի տարածման համար և կնշանակի ISBN Ձեր անունից:

Կարո՞ղ են մարդիկ իրենց երկրում գտնել իմ գրքերը որոնողական ծրագրերի միջոցով: Եթե ոչ, ապա ի՞նչպես այն կարելի է իրականացնել:

Ոչ: Այն իրականացնելու համար պետք է դիմել համապատասխան ISBN գործակալութուն և տեղեկանալ, թե ինչպես կարելի է մուտք գործել շրջանառվող գրքերի ազգային գրանցամատյան: Սակայն Ձեզնից կարող է պահանջվել այդ երկրում Ձեր հասցեի և գրքի տարածողի առկայությունը: Որոշ հանգամանքներում գիրքը պետք է լինի նաև այդ երկրի լեզվով:

Հաջորդող հարցերի շարքը վերաբերում է ISBN-ի կառուցվածքում կատարված փոփոխություններին և ստանդարտի վերանայմանը:

Ո՞րն է ISBN-ի և դրա կառուցվածքի վերանայման հիմնական նպատակը:

ISBN-ի վերանայման հիմնական նպատակը ISBN համակարգի համարակալման հնարավորությունների ընդլայնումն էր: էլեկտրոնային հրատարակչության և գրքարդյունաբերության ոլորտում կատարված այլ փոփոխությունների արդյունքում, ISBN համակարգի համարակալման հնարավորությունները սպառվում էին ավելի արագ, քան նախատեսված էր 1960-ականների վերջերին ISBN համակարգը հիմնելու ժամանակ:

Որո՞նք են ISBN համակարգի փոփոխությունները:

ISBN-ի երկարությունը փոխվում է 10 նիշից 13-ի: Այժմ ISBN-ը կներառի հիմնական առաջնային նախածանցի տարրը՝ կազմված 3 թվերից EAN միջազգայինի կողմից: EAN միջազգայինի կողմից դեռևս տրամադրվել են 978 և 979 նախածանցները, սակայն կարող են լինել հավելյալ նշանակումներ՝ հետագայում ապահովելու համար ISBN համակարգի համարակալման հնարավորությունները: ISBN-ները կպահպանեն իրենց ստուգիչ թիվը, սակայն կփոխվի նրանց հաշվելու մեթոդը: Ավելի սպառիչ տեղեկատվության համար նայեք 4.5 բաժինը:

Ի՞նչու այսպիսի և ոչ այլ լուծում:

13-նիշի ընդունման որոշումը նպատակահարմար էր, քանի որ գրքերը կարող են ունենալ և ISBN և EAN-13 գծիկավոր ծածկագիր՝ տասանիշ ISBN-ին նախորդող 978-ը և վերահաշված վերջնական ստուգիչ թիվը: Այս որոշումը հնարավորություն կտա նաև հետագայում “979” EAN նախածանցի կիրառման համար:

Ի՞նչու ISBN-ը չվերածվեց «համր» համարի, ինչպես ISSN-ը:

Քանի որ այդպիսի համակարգն անկառավարելի կլիներ առանց տվյալների կենտրոնացված շտեմարանի գործածման, որը հնարավորություն է ընձեռում կառավարելի դարձնելու ISBN-ի նշանակման գործընթացը և կանխելու համարի կրկնողությունը: Այդ կենտրոնացված տվյալների շտեմարանի կատարելագործումը, նույնիսկ բաժանված ցանցի միջոցով, բավականին թանկ և բարդ կլիներ ISBN համկարգը կիրառողների համար:

Որո՞նք են տասներեքանիշ ISBN-ի փոփոխությունների հետևանքները:

Նրանք, ովքեր գրառում, պահպանում կամ փոխանակում են ISBN տվյալներ ավտոմատ համակարգով, պետք է երաշխավորեն, որ այդ համակարգերը համապատասխանում են տասներեքանիշ ISBN-ի ֆորմատին: Այս փոփոխությունները գլխավորապես վերբերում են հրատարակիչներին, տարածողներին, գրքի մանրածախ վաճառքով զբաղվողներին և գրադարաններին: Այն կներգործի այնպիսի ծրագրերի վրա, ինչպիսիք են ավտոմատացված պատվիրող համակարգերը, գույքագրման համակարգերը, վաճառքի համակարգերը և գրադարանային տվյալների շտեմարանները:

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
տասներեքանիշ ISBN-ների կիրառման ուղեցույցից

Հետադարձ ձևափոխում

Հրատարակիչները կարիք կունենան վերահաշվարկելու իրենց բոլոր ISBN-ները և համաձայնեցնելու նոր թվային ֆորմատը իրենց համակարգերին: Այն կներառի բոլոր տպագրվող գրքերի ISBN-ները և հավանաբար բոլոր, կամ գրեթե բոլոր, տպագրությունից դուրս եկած այն գրքերի ISBN-ները, որոնք կարող են պատվիրվել կամ հետազոտվել, ինչպես նաև տեղական գործակալությունների կողմից առաջարկված բոլոր չնշանակված ISBN-ները:

Համակարգչային ծրագիրը լայնորեն կկիրառվի փոքրամասշտաբ վերաձևավորումների համար, իսկ համակարգի մատակարարները կարող են իրենց հաճախորդներին առաջարկել վերաձևավորման ծրագրեր: Շատ հրատարակիչներ, մասնավորապես նրանք, ովքեր ունեն չնշանակված ISBN-ների զգալի քանակ, կարող են փորձել շարունակել տասանիշ ISBN-ների կիրառումը ներքին համակարգի համար կամ գտնել այլ լուծումներ, որոնց շնորհիվ իրականում տասանիշ ISBN-ի վրա հիմնված կառուցվածքը կթվա փոփոխված: Այս մոտեցումը չի խրախուսվում, քանի որ հնարավոր են թյուրիմացություններ կապված 979 նախածանցի ներմուծման հետ: Այն հատկապես վտանգավոր կլինի այն կիրառողների համար, որոնք ISBN-ները նշանակելուց բաց են թողնում նույնիսկ գրանցվողի տարրը՝ ներքին համակարգերում զետեղելով միայն հրատարակության տարրը և ստուգիչ թիվը:

Կարիք չկա, որ հրատարակիչներն իրենց արտադրանքի վրա փակցնեն տասներեքանիշ ISBN, քանի որ գծիկավոր ծածկագիրը կմնա անփոփոխ, իսկ գծիկավոր ծածկագրի ներքևի մասում տպագրված Bookland EAN-13-ը կհամապատասխանի տասներեքանիշ ISBN-ի համարներին (թեև առանց գծիկների):

Գրավաճառները, սկսած 2007թ. հունվարի 1-ից, պետք է գործածեն տասներեքանիշ ISBN-ներ պատվերներ, հաշիվներ և այլ գործառույթներ կատարելու համար: Գրավաճառ համակարգերի մեծամասնությունն արդեն իսկ կկարողանա անցնել արտադրանքի տասներեքա-

նիշ համարների գործածմանը՝ կիրառվող EAN համակարգի կողմից: Գրքերի և այլ իրերի համար նույնական համարի կառուցվածքը, առանց երկակիության վտանգի, կարող է զգալիորեն շահավետ լինել կարդալու և գործածելու համար: Գրքային ֆոնդի վերահսկումը և այլ համակարգերը կարող են պահանջել տասանիշ ISBN-ների վերածումը տասներեքանիշ համարների:

Գրադարաններ և գրադարանային համակարգեր

Գրադարանները և գրադարանային համակարգի մատակարարները պետք է աջակցեն և՛ առկա տասանիշ ISBN-ների, և՛ նոր տասներեքանիշ ISBN-ների կիրառմանը մինչև 2007թ. հունվարի 1-ը, և նույն ձևով շարունակեն հետագայում:

Կարիք չկա ձևափոխելու մատենագիտական գրառումներում նշված ISBN-ները, սակայն ֆորմատները պետք է, որքան հնարավոր է շուտ, կարողանան տեղավորել և՛ տասներեքանիշ, և՛ տասանիշ ISBN-ներ: Գրադարանները հնարավոր է ցանկանան գրառել ISBN-ի երկու ձևերն էլ, եթե երկու ձևերն էլ առկա են հրատարակության վրա, և սա, հավանաբար, կարվի 2007թ. հունվարի 1-ից շատ ավելի վաղ: Եթե գնման պատվերը հիմնված է տասանիշ ISBN պարունակող մատենագիտական գրառման վրա, ապա գործարքի գրանցման ժամանակ, ISBN-ը պետք է վերածվի տասներեքանիշ համարի:

Գրադարանների մշտական ընթերցողները կշարունակեն օգտվել տեղեկագրքերում նշված տասանիշ ISBN-ներից: Ընթերցողը պետք է ի վիճակի լինի գտնելու մատենագիտական տեղեկատվություն գրադարանային գրանցագրքերում՝ անկախ մատենագիտական գրառումներում ISBN-ի ձևերից: Ցուցիչների և որոնողական ծրագրերի փոփոխություններն անհրաժեշտ է կատարել 2007թ. հունվարի 1-ից որքան հնարավոր է շուտ:

Գրադարանները, որոնք ընթերցողներին հնարավորություն են տալիս օգտվել այլ գրադարանների գրանցագրքերից և այլ տեղեկատվական աղբյուրներից, պետք է հաշվի առնեն տասներեքանիշ ISBN-ների հետ կապված փոփոխությունները: Բազմապիսի աղբյուրներից որոնման արդյունքները ISBN-ի միջոցով միաձուլող և վերարտադրող համակար-

գերը պետք է թույլ տան ISBN-ի տարբեր ձևերի կիրառումը: Գրադարանները, որոնց տեղեկագրքերը որոնումների համար մատչելի են հեռակառավարվող համակարգերի միջոցով, դարձյալ պետք է հաշվի առնեն փոփոխությունների ազդեցությունը այդ տեղեկագրքերի վրա:

Գրադարանները պետք է հաշվի առնեն փոփոխությունների ազդեցությունը և՛ իրենց համակարգերի, և՛ հեռակառավարվող համակարգերի վրա՝ կապված ISBN-ի վրա հիմնված տարբեր ծառայությունների համակարգչային հղումների հետ: Այն կարող է ներառել տեղեկագրքերի բարեփոխումներ (կազմի պատկերներ, բովանդակության ցանկեր, համառոտագրություններ և ամփոփումներ և այլ):

Գրադարանային ավտոմատացված համակարգերի ղեկավար մոդուլների շրջանակներում կարող են կատարվել փոփոխություններ կապված դաշտի երկարության, տվյալների վավերացման և դասավորության հետ: Միջգրադարանային փոխանակության համակարգերը կարող են կախված լինել ISBN-ից՝ համապատասխանելիության համար: Կան ծրագրեր, որոնք կիրառում են ISBN-ը մատենագիտական գրառումները համապատասխանեցնելու և վերարտադրելու համար, երբ դրանք մուտքագրվում են:

Գրադարանների համակարգերը պետք է աշխատեն տասներեքանիշ ISBN-ով գրքի ձեռք բերման հետ կապված ցանկացած ոլորտում: Գրադարանավարները և համակարգի մատակարարները պետք է համագործակցեն գրքերի մատակարարների և համապատասխան առևտրային կազմակերպությունների հետ փոփոխության վերաբերյալ պայմանավորվածություններ կատարելու համար: EDI ֆորմատի ստանդարտները, ինչպիսին է օրինակ EDIFACT-ը, նախատեսված են ISBN-ի և EAN-ի համար, այնպես, որ երկուսի տարրերն էլ կարող են փոխանակվել անցումային ժամանակաշրջանում: Պետք է նշել, որ այս ամենը վերաբերում է ոչ միայն տպագիր, այլ նաև էլեկտրոնային գրքերին, ինչպես նաև ISBN-ով նույնականացվող բոլոր նյութերին:

Թեև գրքերի գծիկավոր ծածկագրի համարները կմնան անփոփոխ, սակայն գծիկավոր ծածկագրի տեսածրիչները, որոնք օգտագործվում են տվյալների մուտքագրման կամ EAN գծիկավոր ծածկագրից ISBN-ների ներածման համար, ներկա պահին արտածում են տասանիշ ISBN-ներ և հետևաբար պետք է վերածրագրավորվեն:

ISBN-ի կիրառման փոփոխությունները

Նոր ստանդարտը կներառի ուղեցույցների վերանայված տարբերակներ: Դրանք զգալիորեն չեն տարբերվի առկա ուղեցույցներից՝ արտադրանքների համար ISBN-ի կիրառման կամ ֆորմատի և հրատարակության փոփոխություններին վերաբերող կանոնների տեսակետից: Ինչևէ, դրանք կվերատպվեն համապատասխանելու համար հրատարակության ավելի նոր ձևերին, ինչպիսիք են էլեկտրոնային գրքերը: ISBN-ի մասին ամբողջական տեղեկատվություն կարող եք ձեռք բերել ISBN ձեռնարկից կամ ISBN գործակալություններից:

Տասներեքանիշ ISBN-ների կիրառման ժամանակասկիզբը

2007թ. հունվարի 1-ին տասներեքանիշ ISBN-ի ընդունումը կնախորդվի բավականին երկար անցումային շրջանով. արդյունաբերության առաջընթացի արագությունը կախված կլինի անհատական առևտրային գործընկերների պահանջներից: Նոր համակարգեր կիրառող որոշ կազմակերպություններ գործընթացն արագացնելու համար, հավանաբար, կպահանջեն իրենց գործընկերներից ընդունել տասներեքանիշ ISBN-ները ավելի վաղ: Սա, իր հերթին, կարող է առաջացնել շղթայական ռեակցիա, որն էլ կդարձնի տասներեքանիշ ISBN-ները լայնորեն կիրառելի նշված ժամանակից՝ 2007թ. հունվարի 1-ից, շատ ավելի վաղ:

Հրատարակիչները, որոնք ունեն տասանիշ ISBN-ների համարախումբ, մինչև 2007թ. կարող են իրենց կողմից հրատարակվող գրքերի վրա տպել տասներեքանիշ ISBN-ը տասանիշ ISBN-ի հետ միասին: Եթե ընդունվել է նման որոշում, ապա խորհուրդ է տրվում համարները տպել տիտղոսաթերթի դարձերեսին և, եթե գծիկավոր ծածկագիրը բացակայում է, գրքի կազմի վրա, հետևյալ ձևով.

ISBN-13՝ 978-1-873671-00-9
ISBN-10՝ 1-87367-00-8

Սա թույլ կտա 2007թ.-ից հետո ջնջել ISBN-10-ը վերատպված տարբերակների վրայից նվազագույն արժեքով կամ անվճար: Այնուամենայնիվ, հրատարակիչները պետք է հավաստիացնեն, որ կարող են ստանալ և ընթացք տալ պատվերներին՝ օգտագործելով ISBN-13-ը մինչև տպագրության գործընթացին հասնելը:

2007թ. հունվարի 1-ից հետո հրատարակված գրքերի ISBN-ը պետք է ստանա ընդունված ձևը.

ISBN 978-1-873671-00-9

Գրքի ետևի կազմի վրայի գծիկավոր ծածկագրի պատկերանշանը մնում է անփոփոխ՝ բացառությամբ գծիկավոր ծածկագրի վերևի մասում զետեղված համարի, որը 2007 թ. հունվարի 1-ից հետո պետք է փոխվի տասներեքանիշ համարի՝ պահպանելով գծիկները և նախորդող ISBN տառերը: Հրատարակիչները և տպագրիչները, որոնք օգտագործում են իրենց սեփական ծրագիրը գծիկավոր ծածկագրի ստեղծման համար, պետք է հաստատեն, որ այն համապատասխանում է այս նոր պահանջներին:

ISBN 978-1-873671-00-9

9 781873 671009

Տասներեքանիշ ISBN-ով գծիկավոր ծածկագրի օրինակ

Մինչև 2007 թվական ընկած ժամանակահատվածում հրատարակիչները և տպագրիչները կարող են շարունակել տպել տասանիշ ISBN-ը գծիկավոր ծածկագրի վերևի հատվածում, եթե նույնիսկ տիտղոսաթերթի դարձերեսին նշված են և՛ ISBN-10-ը, և՛ ISBN-13-ը: Նրանք, ովքեր ցանկանում են հաշվարկել ISBN-13-ը գծիկավոր ծածկագրի հիման վրա, պետք է առաջնորդվեն Bookland EAN համարով՝ տպված գծիկավոր ծածկագրի ներքևի մասում:
ISBN ձեռնարկում կարող եք գտնել տասանիշ և տասներեքանիշ ISBN-ների վավերացման ալգորիթմները: Ալգորիթմերին վերաբերող տվյալների ֆայլերը շուտով կհայտնվեն Միջազգային գործակալության կայքում:

Առավել ուշադիր պետք է լինել տեղեկատուների և գրքային ֆոնդերի պատվիրման ձևերի հետ տասներեքանիշ ISBN-ի ներմուծության ժամանակահատվածում: Խորհուրդ է տրվում տպել և՛ 10, և՛ 13 նիշանոց ISBN-ները փոփոխությանը նախորդող ժամանակաշրջանում: Կանխելու համար սխալ ըմբռնումները՝ պետք է խուսափել կրճատված ISBN-ներից:

Հնարավոր է որոշ գրավաճառներ ցանկանան նախքան փոփոխության ժամկետի ավարտը պատվերներ տալ՝ օգտագործելով տասներեքանիշ ISBN-ներ: Սա համագործակցող կողմերի միջև համաձայնության գալու խնդիր է, և հրատարակիչներն իրենց մատակարարների հետ միասին պետք է որոշեն ISBN-ները տասներեքանիշ ֆորմատի վերածելու հարցը: Ամեն դեպքում, նրանք պետք է պատրաստ լինեն կիրառելու 13 նիշերը 2007թ. հունվարի 1-ից հետո՝ 979 համարի հետ կապված հնարավոր թյուրիմացություններից խուսափելու համար:

Պատասխանատվություն փոփոխությունների համար

Կազմակերպություններին խորհուրդ է տրվում, որքան հնարավոր է շուտ, վերանայել բոլոր գոյություն ունեցող համակարգերը՝ ձեռքով իրագործվող և էլեկտրոնային, ստեղծել գործունեության նախագիծ և անհրաժեշտության դեպքում տրամադրել միջոցներ: Խորհուրդ է տրվում յուրաքանչյուր կազմակերպությունում նշանակել ավագ օգնական՝ հսկելու անհրաժեշտ փոփոխությունները բոլոր համապատասխան ոլորտներում: Սա նախ և առաջ ազդեցություն կունենա համակարգերի վրա, սակայն այն կազդի նաև հրատարակչատներում խմբագրական գործընթացի, վաճառքի և առևտրի, ձևավորման և արտադրման բաժինների, ինչպես նաև հեղինակային հոնորարների և հաշվառման գործառույթների վրա:

Հնարավոր, բայց ոչ սպառիչ, համակարգերի ցանկը, որը հրատարակչական կազմակերպություններում կարող է ազդեցության ենթարկվել, հետևյալն է.

- ISBN-ի նշանակում,
- արտադրանքի մասին տեղեկատվություն,
- խմբագրական աշխատանքների կառավարում,
- արտադրական համակարգեր,
- էլեկտրոնային գրքերի մատակարարման համակարգեր,
- պատվերների իրականացում / մեծածախ վաճառքի կառավարում,
- հաշվապահություն,

- իրավունքներ և պայմանագրեր,
- իրավունքների և հոնորարների համակարգերի կառավարում:

Գրավաճառները, այլ հնարավոր ոլորտների հետ միասին, կարիք ունեն վերանայելու՝

- պատվիրող համակարգերը,
- գրքային ֆոնդի վերահսկումը,
- վաճառքի համակարգերը,
- հաշվապահությունը:

Գրադարանները կարիք ունեն վերանայելու՝

- ստացման համակարգերը՝ ներառյալ առևտրային գործընկերների հետ գործարքի կատարման հաղորդագրությունները,
- ցուցակագրումը և այլ մատենագիտական տվյալների մուտքագրման համակարգերը,
- միջգրադարանային փոխանակության համակարգերը,
- մատենագիտական գրառումների ներմուծման սահմանված կարգերը,
- գծիկավոր ծածկագրի թվանշագրիչները,
- տեղական տեղեկատուները,
- տեղեկատվության ոստնային կայքի / որոնման համակարգերը,
- հեռադիր տեղեկատվական աղբյուրների և հաճախորդների հետ փոխգործունեությունը,
- հեռադիր ծառայությունների և բովանդակության ելքային և մուտքային համակարգերը,
- ISBN-ի հետ առնչվող այլ գործառույթները և համակարգերը:

Առևտրային գործընկերների հետ հաղորդակցումը

Հստակ որոշումները և հաղորդակցումը, կապված ժամանակի ընտրության և կիրառման մեթոդների հետ, առանցքային դեր են խաղում նոր ստանդարտի բարեհաջող ներմուծության գործում: Բոլոր կազմակերպություններին խորհուրդ է տրվում խորհրդակցել իրենց առևտրային գործընկերների հետ կիրառման նախագծերի և ժամանակացույցերի մասին և հավաստիանալ, որ իրենց գործընկերները ձեռ-

նարկում են նման միջոցառումներ:

Այլ նկատառումներ

Ապագայում, գրքերի առևտրում ընդունվող նախածանցները տասներեքանիշ ISBN-ների համար, հավանաբար, հնարավորություն կտան պահպանել նոր սահմանված կառուցվածքը երկար ժամանակ: Համակարգի ստեղծողները կարող են հաշվի առնել որոշ հնարավոր լրացուցիչ տարբերակներ՝ կապված դաշտի երկարության հետ:

- Որոշ կազմակերպությունների մոտ հետաքրքրություն է նկատվում 14 նիշանոց GTIN (առևտրային առարկայի համաշխարհային համար) նկատմամբ, որտեղ 13 նիշանոց ISBN-ին նախորդում է լրացուցիչ նիշ, որը կարող է օգտագործվել որպես փաթեթային ցուցիչ՝ առևտրային գործընկերների համաձայնությամբ:
- Թվայնացված օբյեկտի նույնականացուցչի (DOI) կամ միասնական ռեսուրսների անունների (URN) կիրառումը կարող է մասսայաբար ընդունվել արդյունաբերության մատակարարների շղթայի շրջանակներում. սրանք տարբեր երկարության նույնականացուցիչներ են, որոնք կարող են ընդգրկվել ISBN-ներում:

ISBN համակարգն իր այս նոր ձևով ստեղծված է լինելու ամուր և կայուն բոլոր առկա կիրառությունների համար:

Հաճախակի տրվող հարցեր

Ի՞նչ է լինում այն ISBN-ների հետ, որոնք արդեն ծեռք են բերվել հրատարակչի կողմից, սակայն դեռ չեն նշանակվել:

Հրատարակիչը պետք է շարունակի օգտագործել այդ ISBN-ները մինչև դրանց սպառումը, սակայն պետք է համապատասխանեցնի համարի ֆորմատը 13 նիշանոցի ստանդարտին՝ ավելացնելով 978:

Օրինակ. ISBN 1-873671-00-8-ը

փոխվում է

ISBN 978-1-873671-00-9-ի:

Արդյո՞ք հարկավոր է արդեն տպագրված հրատարակություններին նոր ISBN նշանակել:

Ոչ: Առկա ISBN-ները պետք է փոխվեն տասանիշից տասներեքանիշ ֆորմատի 2007թ. հունվարի 1-ից:
Կարիք չկա փոխել գրքի վրա զետեղված ISBN-ը մինչև վերջինիս վերատպումը, քանի որ գծիկավոր ծածկագիրն արդեն ներկայացնում է EAN-13-ը, որն էլ հենց նույն համարն է, ինչ-որ նոր ISBN-ը:

Կարող են արդյո՞ք հրատարակիչները վերաօգտագործել առկա տասանիշ ISBN-ները նոր հրատարակությունների համար՝ ավելացնելով 978 նախածանցը:

Ոչ: Նախկինում օգտագործված ISBN-ին 978 նախածանցի ավելացումը չի ստեղծում նոր ISBN:

Կարո՞ղ եմ հաղորդակցվել առևտրային գործընկերների հետ, օգտագործելով տասանիշ ISBN 2007թ. հունվարի 1-ից հետո:

2007 թ. հունվարի 1-ից ISBN-ը կդառնա տասներեքանիշ համար, և բոլոր մեխանիկական համակարգերը պետք է հարմարեցվեն այդ ձևին:

Առևտրային համակարգերը նշված ժամանակից հետո կարող են չընդունել տասանիշ ISBN-ները: Անցումային ժամանակաշրջանում հնարավոր է համաձայնության գալ առևտրային գործընկերների հետ երկու ֆորմատների օգտագործման վերաբերյալ:

Հրատարակիչները պե՞տք է անցնեն տասներեքանիշ ISBN-ների կիրառմանը, թե՞ կարող են շարունակել տասանիշ համարի օգտագործումը:

Հրատարակիչները պետք է հարմարեցնեն իրենց համակարգերը տասներեքանիշ համարին 2007 թ. հունվարի 1-ից հետո՝ խուսափելու համար հնարավոր թյուրիմացությունից (երբ հավելյալ 979 նախածանցը գործածության մեջ դրվի): Հրատարակիչներից պահանջվում է սա անել ոչ ուշ քան նշված ժամկետը: Կարևոր է մեխանիկական համակարգերի ընդունումը մինչ նշված ժամկետը՝ առևտրային գործընկերների հետ առանց ընդհատումների հաղորդակցումն ապահովելու համար:

Եթե մեր ընկերությունն ունի զգալի թվով տասանիշ ISBN-ներ, կարիք կա, արդյո՞ք, նրանց վերափոխումը տասներեքանիշ համարների:

ISBN միջազգային ստանդարտը փոխվում է: ISBN համակարգն արդյունաբերությունում ողջ առևտուրը վարում է միջազգայնորեն, և ISBN-ի հատկացումը կազմակերպվում է միջազգային հիմքերի վրա: 13 նիշանոց ISBN-ը անհրաժեշտ է, քանի որ գոյություն ունեցող համարների պաշարը աշխարհի որոշակի շրջաններում սպառվում է: Հետևաբար, համակարգը պահպանելու համար և համարի ընդգրկունակությունն ընդլայնելու նպատակով ընդունվեց հավելյալ 979 նախածանցը:

Կարո՞ղ են հրատարակիչներն օգտագործել 979 նախածանցն իրենց տասանիշ ISBN-ների հետ:

Ոչ: Տե՛ս հաջորդ հարցը:

Արդյո՞ք մեր հրատարակչական ընկերությունը կստանա նույն նախածանցները նոր 979 շրջանակում, ինչպիսին ունեինք 978-ի շրջանակում:

Հավանաբար, ոչ: Տասանիշ ISBN-ների անբավարարության պատճառներից մեկն այն է, որ նախածանցները նախկինում չափազանց առատ էին բաշխվում, որի արդյունքում որոշ հրատարակիչներ ձեռք բերեցին ավելի շատ համարներ, քան պահանջվում էր: ISBN գործակալությունները ձեռնամուխ կլինեն հետագայում հատկացնելու համարների ավելի փոքր խմբեր, և սա կհանգեցնի նախածանցների նշանակման նոր չափանիշի:

Հարկավո՞ր է, արդյոք, 10 և 13 նիշանոց ISBN-ների համատեղ տպագրումը հրատարակության վրա:

2007 թ. հունվարի 1-ից հետո լույս տեսած հրատարակությունների վրա պետք է տպել միայն 13 նիշանոց ISBN-ը: Պահանջվող փոփոխության քանակը նվազագույն դարձնելու համար հրատարակիչները մինչև նշված ժամկետը կարող են տպել և՛ 10, և՛ 13 նիշանոց ISBN-ները տիտղոսաթերթի դարձերեսին, այնպես, որ նշված ժամկետից հետո վերատպվող գրքերից հնարավոր լինի ջնջել տասանիշ տարբերակը:

Կարիք չկա 13 նիշանոց ISBN-ը ներառել գծիկավոր ծածկագրի վերևի մասում մինչև 2007 թ. հունվարի 1-ը, քանի որ Bookland EAN-ի համարը արդեն իսկ երևում է գծիկավոր ծածկագրի ներքևի մասում, որն էլ համապատասխանում է ISBN-13-ին (թեև առանց գծիկների): 2007 թ. հունվարի 1-ից հետո տպագրված հրատարակությունների հետևի կազմի վրա՝ գծիկավոր ծածկագրի վերևի մասում, պետք է նշել 13 նիշանոց ISBN-ը՝ պահպանելով ճշգրիտ գծիկավորման կառուցվածքը:

Միջազգային համակարգերի զարգացման ուղեցույց

ISBN-ի հետ փոխազդեցություն ունեցող ծրագրերի ձևավորման ընթացքում համակարգերի ստեղծողները կարող են հաշվի առնել հետևյալ կետերը.

ISBN տվյալների մուտքագրում՝ ընդհանուր նկատառումներ

Քանի որ ISBN ստանդարտը սահմանում է մեկ 13 նիշանոց ստանդարտ, ապա 10 նիշի դրսևորումները, կապված 978 EAN.UCC նախածանցի հետ, կհանդիպեն մատակարարողների շղթայի շրջանակներում մի քանի տարի շարունակ: Համակարգի ստեղծողները պետք է հաշվի առնեն ներածման մեխանիզմների կողմից 10 կամ 13 նիշանոց ISBN-ի ընդունման աստիճանը և վերածմանը ներքին համակարգի պահանջներին համապատասխան:

Այնտեղ, որտեղ 10 նիշանոց ISBN-ը փոխվում է 13 նիշանոցի, 10 նիշանոց ISBN-ի 9 նիշերին նախորդում է 978 տարրը, և հաջորդում է ստուգիչ թիվը՝ հաշվարկվող մոդուլ 10-ի օգնությամբ (ստուգիչ թվի բանաձև, բաժին 4.5):

Քանի որ բոլոր EAN.UCC նույնականացուցիչները կարող են հանդես գալ 14 նիշանոց ձևով, այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում, որ համակարգերի ստեղծողները գործեն համաձայն GTIN-ի: GTIN-ի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տե՛ս բաժին 13.2:

ISBN տվյալների մուտքագրում՝ նկատառումներ վավերացման վերաբերյալ

Գոյություն ունեն վավերացման երկու մակարդակներ հաստատելու համար, որ մուտքագրված տվյալը հավանական ISBN-ն է.

- Ստուգիչ թվի վավերացում (տե՛ս բաժին 4.5)
  - Ստուգիչ թվի վավերացման գործընթացը պարզ մաթեմատիկական բանաձև է, որը կարող է կիրառվել վավերացնելու ISBN-ի մուտքագրված տվյալների ներքին համատեղելիությունը: Ստուգիչ թվի վավերա-

ցումը կարող է որսալ մուտքագրված տվյալի սխալները, սակայն չի հաստատի, որ ISBN-ը որոշված գրանցախմբից գրացվողի համար է:

- Գրանցախմբի և գրանցվողի վավերացում (տե՛ս բաժին 4.6)
  - Երկու քայլից բաղկացած այս բանաձևային գործընթացը կհաստատի այն, որ գրանացախումբը և տվյալ խմբի շրջանակներում գրանցվող համարախումբը սահմանված է ISBN միջազգային գործակալության կողմից: Եթե գրանցախումբը կամ գրանցախմբի համարախումբը որոշված չէ, ապա ISBN-ը անվավեր է: Եթե գրանացխումբը և գրանցաշարքը որոշված է, ապա այս գործընթացից բխող տեղեկատվությունը հնարավորություն է տալիս ISBN-ը մասնատել 5 տարրերի՝
    - նախածանց,
    - գրանցախմբի տարր,
    - գրանցվողի տարր,
    - հրատարակության տարր,
    - ստուգիչ թիվ:

  - Գրանցախմբի շարքի նշանակումը և սահմանումը շարունակական գործընթաց է՝ վերահսկվող ISBN միջազգային գործակալության կողմից: Ընթացիկ գրանցախմբի շարքի տեղեկատվությունը հասանելի կլինի ստանդարտ URL-ից՝ ISBN միջազգային գործակալության կայքում: Համակարգի մշակողները կանոնավոր կերպով կարող են ստուգել այս URL-ն՝ մասնատվող տվյալների և վավերականության նորացման համար:

ISBN տվյալների արտածում՝ ընդհանուր նկատառումներ

ISBN-ի ամբողջ տվյալների փոխանցումները պետք է գործեն 13 նիշին համապատասխան 2007 թ. հունվարի 1-ից: